ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

# ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԲԳ ՄԻԼԻՑԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 1933

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։

351.74

# ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

# ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## (ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Կազմեց՝ Գ. ՀԱԽՈՒՄՅԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ 1933

Սրբագրիչ՝ Մ. Գևորգյան

ԳՈՍՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլիտ 9177 (բ) Պատվեր 413 Տիրաժ 1000

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 1929 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԿԱՐԳԱԴՐԻՉ ՆԻՍՏԻ № 48 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

(Քաղվածք)

ԼՍԵՑԻՆ.

10. *Միլիցիայի և քրեական հետախուզության աշխատակիցների մահվան կամ հաշմանդամության դեպքերի ապահովագրության տարիֆի մասին:* (*Ներքգործժողկոմատի կոմիտեյի* 1929 *թ. սեպտեմբերի* 23-*ի* № 2157, *Ֆինժողկոմատի հոկտեմբերի* 4-*ի* 312—96 *գրությունները*): *Տեղեկանք. Ժողկոմխորհի* 1929 *թ. սեպտեմբերի* 16-*ի Կարգադրիչ նիստի* № 37 *արձանագրության* «30-*րդ կետի վորոշումը* (*Գործ* № 370-37):

ՎՈՐՈՇԵՑԻՆ.

10. *Համաձայնվել Ֆինժողկոմատի յեզրակացության և ՀՍԽՀ Միլիցիայի և քրեական հետախուզության աշխատակիցների ապահո-*

վարդման մինիմալ տարիֆը սահմանել տարե-կան մեկ հազարին—8 ռուբլի:

Ժողկոմխորհի նախագահի տեղակալ՝
Ա. Մռավյան

Ժողկոմխորհի գործ. կառավարիչ՝
Ի. Կարապետյան

Ժողկոմխորհի քարտուղար՝ Ա. Խոսհակյան

## Բացատրական ծանոթություն

Համաձայն Բ. Գ. Միլիցիայի շարքային կազ-մի և քրեական հետախուզության ակտիվ կազ-մի աշխատակիցների կոլեկտիվ ապահովագր-ման՝ Պետաշխինտյանձնարարչների ու Պետավար-կի Գլխավոր Վարչության պատասխանատու և մահվան դեպքերի և աշխատունակության (մշտական) կորստի համար, վորոնք տեղի յեն ունեցել ապահովագրվածների հետ իրենց պար-տականությունները կատարելիս կամ իրենց պաշտոնական պարտականությունները կատա-րելու հետևանքով:

Միլիցիայի և քրեական հետախուզության աշխատակիցների նկատմամբ ապահովագրող է հանդիսանում Բ. Գ. Միլիցիայի Գլխավոր Վարչությունը:

Ապահովագրման գումարը չի կարող 3000 ռուբլուց ավելի լինել յուրաքանչյուր անձի համար և պետք է միատեսակ լինի ամեն մի առանձին կազմակերպության բոլոր անձերի համար: Ապահովագրվածի մահվան կամ աշ-

խատունակության (մշտական) ամբողջական կորուստի դեպքում վերոհիշյալ հանգամանքներում Պետաշխխնայգանձարկղի և Պետվարկի Գ-յի. Վարչությունը վճարում է ապահովագրական գումարն ամբողջովին. աշխատունակության (մշտական) մասնակի կորստի դեպքում վճարվում է ապահովագրական գումարն այնքան տոկոսով, որքան տոկոսով կորած է աշխատունակությունը:

Ապահովագրական վարձատրությունը տրվում է աշխատունակության կորստի դեպքում իրեն՝ տուժած ապահովագրվածին, իսկ մահվան դեպքում այն անձին կամ անձերին, որոնք նշված կլինեն ապահովագրվածի կողմից այդ մասին արված հատուկ հայտի մեջ: Իսկ յեթե այդպիսի հայտ ներկայացված չի յեղել, ապահովագրական գումարը վճարվում է ապահովագրվածի օրինական ժառանգներին:

(«Правила коллективного страхования пожарных работников профессиональных пожарных организаций и работников строевого состава милиции и активното состава уголовного розыска», § § 1, 2 и 3., утвержденн. НКФ СССР, 14 и 23 января 1930 г.).

## ՀՐԱՀԱՆԳ № 011

## ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

**ԲՈԼՈՐ ՔԱՂ. ՑԵՎ. ՇՐՋՄԻԼՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ**

1933 թ. փետրվարի 10-ին

Համաձայն Աշխատանքի ու Պաշտպանության Խորհրդի անորբինակյան նիստի 1927 թ. օգոստոսի 13-ի վորոշման և ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների 1931 թ. մայիսի 25-ի վորոշման «ԲԳ Կարմիր Բանակի միջին, ավագ ու բարձրագույն զինվորական կազմի անձանց, նաև գերակա ծառայության կրտսեր զինվորականության ու շարքային կազմի անձանց ու ռազմածովային ուժերի դպրոցների ուսանողների, ինչպես նաև այդ անձանց ընտանիքների պետական ապահովության կանոնադրությունը», վոր հաստատված է ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1931 թ. փետրվարի 21-ին, տարածվում է նաև ԲԳ Միլիցիայի կրտսեր, միջին, ավագ և բարձրագույն զինվորական կազմի և ԲԳ Միլիցիայի դպրոցների ուսանողների, նաև այդ անձանց ընտանիքների վրա։

Պետական ապահովության այդ կանոնները գործադրության մեջ են մտնում ԲԳ Միլիցիայի գլխապետական կազմի համար 1932 թ. հունվարի 1-ից:

Իսկ ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1932 թ. դեկտեմբերի 3-ի վորոշման համաձայն այդ արտոնությունները 1933 թ. հունվարի 1-ից տարածվում են նաև ԲԳ Միլիցիայի շարքային կազմի վրա (ԽՍՀՄ Որ. և կարգ. ժող. 1932 թ. № 80 հոդ. 490).

Ի հետևումն վերոհիշյալի առաջարկում ենք բոլոր միլպետներին ղեկավարվել ստորև բերված հրահանգիչ կանոններով ԲԳ Միլիցիայի գլխապետական կազմի և դպրոցների ուսանողների, նաև նրանց ընտանիքների պետական ապահովության վերաբերյալ արտոնությունների հարցերը վորոշելիս:

ՀՍԽՀ Միլիցիայի Գլխավոր Վարչության պետ՝ Ա. Դուլգարյան

Կազմտեսչության պետ՝ Գ. Հախումյան

## ԲԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԻՋԻՆ, ԱՎԱԳ ՅԵՎ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԳԼԽԱՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ, ԳԵՐԱԿԵՏ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՐՏՍԵՐ ԳԼԽԱՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ԱՆՁԱՆՑ ՅԵՎ ՌԱԶՄԱ-ՈԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ԱՅԴ ԱՆՁԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ

(Հաստատված է ԽՍՀՄ Կենտգործկոմի յեվ Ժողկոմխորհի կողմից 1931 թ. փետր. 21-ին)

### ԳԼՈՒԽ I

### ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

*Հոդ. 2. «Կանոնադրության»*

1. *Սույն Կանոնադրության համաձայն պետական ապահովությունը տրվում է երբև կենսաթոշակ և երբև նպաստ.*

*Կենսաթոշակ տրվում է.—*

*ա) Հաշմանդամության դեպքում.*

*բ) Բ. Գ. Միլիցիայում ծառայության տարիների համար.*

*գ) Կերակրողի մահվան դեպքում.*

*դ) Անհատական:*

Նպաստները տրվում են.—

ա) Յերեխայի ծնվելու դեպքում.

բ) Թաղման համար.

գ) Արձակման համար (Выходное пособие).

դ) Կերակրողի մահվան դեպքում:

ԳԼՈՒԽ II

## Ո՞ՒՄ ՎՐԱ ՅԵ ՏԱՐԱԾՎՈՒՄ «ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հոդ. 1. «Կանոնադրության».

2. Պետական ամեն տեսակ ապահովության իրավունք ունեն Բ.Գ. Միլիցիայի նախահաշվով տրամադրված վարկերի հաշվին.—

ա) Բ.Գ. Միլիցիայի կրտսեր, միջին, ավագ ու բարձրագույն գլխապետական կազմի անձինք, վորոնք ծառայության մեջ են Բ.Գ. Միլիցիայի կադրերում կամ ռեզերվում առ 1 հունվարի 1932 թ. կամ այդ ժամկետից հետո:

բ) Բ.Գ.Միլիցիայի յենթակա հիմնարկների ուսանողները, վորոնք առ 1 հունվարի 1932 թ. կամ այդ ժամկետից հետո գտնվում են այդ հիմնարկներում, բացառությամբ կարճատև բոլոր տեսակի դասընթացներից:

գ) Վերոհիշյալ անձերի ընտանիքները, յերբ նրանք մասնակցել են կադրերում, ռեզերվում, կամ կենսաթոշակառու յեղած միջոցին, յեթե կենսաթոշակի իրավունքները սահմանված կլինեն վոչ ուշ, քան յերկու տարվա ընթացքում կերակրողի մահվանից հետո:

Հոդ. 3. «Կանոնադրության»

3. Այն անձինք, վորոնք սույն Կանոնադրության համաձայն կենսաթոշակի և նպաստի իրավունքներ և սոցիալական ապահովագրության կամ հատուկ օրենքների հիման վրա կենսաթոշակի կամ նպաստի իրավունք ունեն, կենսաթոշակն ու նպաստն ստանում են վորևե մեկ կարգով իրենց ընտրությամբ:

ԳԼՈՒԽ III

## ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ

Հոդ. 21 «Կանոնադրության»

4. Ծառայության տարիների հաշվարկի մեջ մտնում է Բ.Գ. Միլիցիայի շարքային և կրտսեր գլխավորական կազմում ժամկետային ու գերակետ ծառայության ժամանակը, և միջին, ավագ ու բարձրագույն գլխավորական կազմի կոչումներում և ռեզերվում ծառայելու ամբողջ ժամանակը:

Հոդ. 22 «Կանոնադրության»

5. Ծառայության տարիների մեջ հաշվում է նաև ծառայության ժամանակը.

ա) Կարմիր գվարդիայի ջոկատներում և գուգաղներում (դրուժինա) ու կարմիր պարտիզանական ջոկատներում:

բ) Հեղափոխական կարգի ու անվտանգության ջոկատներում և գուգաղներում սկսած

1917 թ. նոյեմբերի 7-ից, անկախ վարած պաշտոններից:

գ) Հին բանակի զորամասերում 1917 թ. նոյեմբերի 7-ից, յեթե զինվորական ծառայողն անմիջապես անցել է բանվորա-գյուղացիական կարմիր բանակը նրա կազմակերպման առաջին իսկ օրից:

դ) Ներքին պաշտպանության զորամասերում, աշխատավորական բանակների զորամասերում, քաղաքացիական ռազմադաշտային մարմիններում:

յե) Վարչությունների, հեղկոմների, տեղական գործկոմների ու խորհուրդների բաժինների հետևյալ պաշտոններում. վարչության բաժինների վարիչների, վարչության բաժինների կոլեգիաների անդամների, ՎԲ քարտուղարների և Միլիցիայի գործառնական (ֆունկցիոնալ) մասերում, քրեական հետախուզության յենթաբաժնում, ընդհանուր յենթաբաժիններում և տեղեկատու-հրահանգչական յենթաբաժիններում, անկախ վարած պաշտոններից:

զ) Գործկոմների և խորհուրդների վարչական բաժիններում, բոլոր գործառնական (ֆունկցիոնալ) մասերում, բացի կալանատեղերի տեսչությունից, ներքին գործերի ժողկոմատի բաժիններում, վարչություններում և զորամասերում, կենտրոնական վարչական վարչություններում, բոլոր գործառնական մասերում, բացի կալանատեղերի վարչություններից (բաժիններից), կոմունալ տնտեսության

վարչությունների և այդ մարմինների տնտե-սական միավորումներից։

Հոդ. 23 «Կանոնադրության»

6. Ծառայության տարիների ժամկետնե-րը հաշվելիս հաշվվում է.—

ա) Կարմիր գվարդիայի ջոկատներում և պարտիզաններում նաև հեղափոխական կարգի ու անվտանգության պաշտպանության մեջ ծառա-յած մեկ ամիսը—չորս ամիս։

բ) Ծառայած մեկ ամիսը—երեք ամիս.

1) Բան-դյուղ. կարմիր բանակի և ՄՊԲՎ զորամասերում. ռազմական գործողությունների ժամանակ. 2) Բ.Գ. կարմիր բանակի, ՄՊԲՎ և Բ.Գ. Միլիցիայի մասերում հակահեղափո-խական ելույթների և բանդիտիզմի լիկվիդա-ցիայի ժամանակ. 3) կարմիր պարտիզանական ջոկատներում. 4) Համառուսաստանյան Ար-տակարգ Հանձնաժողովների (Չեկա) մարմին-ներում քաղաքացիական պատերազմի ժա-մանակ։

գ) Ծառայած մեկ ամիսը—երկու ամիս.

1) Բ.Գ. կարմիր բանակի մասերում, Մ.Պ.Բ.Վ. և Միլիցիայի մարմիններում առանձնապես հեռավոր վայրերում*). 2) Ողային

---

*) ՀՍԽՀ առանձնապես հեռավոր վայրեր են համարվում Աղբաբայի, Բասարգեչարի, Գորիսի, Դարալագյազի, Ղափանի, Մարտունու, Մեղրու, Փաշալուի, Ստեփանավանի և Շամշադինի շրջանները։

տորմիղում (Ֆլոտ) մասերում և ոստիկանությ... 

տորմիղում (ֆլոտ) մասերում և ողաչու—վերելային կազմում. 3) քիմիական զորամասերում թունավոր նյութերով տարվող անմիջական աշխատանքի ժամանակ. 4) Մ.Պ.Ք.Վ. սահմանային զորամասերի ուղեկալներում և հեռավոր վայրերի պարետությունների վարչություններում, ինչպես նաև անմիջականորեն սահմանապահ ծառայություն վարող Բ.Գ. կարմիր բանակի այլ զորամասերում:

դ) Ծառայած մեկ ամիսը—մեկ ու կես ամիս.

1) Հեռավոր վայրերում**) ԲԳ կարմիր բանակի մասերում, ՄՊՔՎ և ԲԳ Միլիցիայի մարմիններում սկսած 1922 թ. հունվարի 1-ից. 2) ՄՊՔՎ սահմանապահ զորամասերում բացառությամբ ուղեկալներից և հեռավոր վայրերի պարետային վարչություններից, ուր մեկ ամսվա ծառայությունը հաշվում է 2 ամիս:

3) ԲԳ Միլիցիայի մարմիններում օպերատիվ—վարչական պաշտոններում համաձայն ան վանացանկի (տես հավելված № 1, էջ 45—46):

Հոդ. 24. «Կանոնադրության».

7. Ցեթե միևնույն ժամանակամիջոցի տարիների ծառայության ժամկետն արտոնյալ կերպով հաշվելու համար յերկու կամ ավելի հիմունքներ կան, ապա ժամկետը հաշվվում է

---

*) Հեռավոր վայրեր են համարվում ՀՍԽՀ Թա-ցյալ բոլոր վայրերը, բացառությամբ վերը հիշատակված առանձնապես հեռավոր վայրերից.

այն հիմունքով, որին առավելաչափ արտոնու-թյուն է տալիս:

8. Ծառայության ժամկետները հաշվելիս ղեկավարվել հետևյալով.

ա) Ծառայության ժամանակը մինչև 1923 թ. մայիսի 1-ը, որը նշանակված է ծառայու-թյան ցուցակում, իբրև հիմք է ընդունվում և ճշտվում է անձնական գործերի և արխիվային նյութերով, հրամաններով ըստ համապատաս-խան մարմինների, իսկ անհրաժեշտ դեպքում վկաների ցուցմունքով, որոնք կապացուցեն իրենց ծառայական ցուցակներով, որ ծառայել են միասին:

բ) 1923 թ. մայիսի 1-ից սկսած ծառայու-թյան վերաբերյալ տվյալները պետք է հաստատ-ված լինեն պատշաճ հրամանների, մանդատնե-րի, հավաստագրերի կամ այլ համանման վավե-րագրերի պատճեններով:

Հոդ. 26. «Կանոնադրության»

9. Խ.Ս.Հ.Մ. շքանշանով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձե-րի Բ.Գ. կարմիր բանակում տարիների ծառա-յության համար արժող կենսաթոշակը հաշվե-լիս, նախորդ հոդվածներով հաշված յուրա-քանչյուր 8 ամիսը հաշվվում է որպես ծառա-յության մեկ տարի:

Հոդ. 25. «Կանոնադրության»

10. Ծառայության տարիները չեն հաշվըվ-վում.—

ա) Գերության կամ ոտար կալանման մեջ գտնված ժամանակը, յեթե չապացուցվի, վոր զինվորական ծառայողն ամեն միջոց գործադրել ե գերությունից կամ կալանումից խուսափելու համար.

բ) Զորամասից ինքնակամ բացակայելու ժամանակը.

գ) Դատավճռով ազատազրկման վայրերում կամ պարտադիր աշխատանքներում անց կացրած ժամանակը.

դ) Պատժական կամ ռազմա-ուղղիչ զորամասերի փոփոխական կազմերում, նաև վորպես վարչական տույժի միջոց կալանքի մեջ լինելու ժամանակը:

յե) Ժամանակավոր կառավարության միլիցիայի ծառայության մեջ յեղած ժամանակը.

զ) Մ.Պ.Ք.Վ. մարմիններում, տնտեսական ու ոժանդակ ձեռնարկություններում ծառայությունը, յեթե այդ անձերի վրա չի տարածվում «Պետապահովության կանոնադրությունը».

ը) Հատուկ ռեզերվի աշխատակիցների աշխատանքների ժամանակ Մ.Պ.Ք.Վ-ից դուրս.

թ) Ժողտնտխորհի, Ճան. հաղ. ժողկոմատի և այլ ռազմականացած պահակներում ծառայությունը:

# ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ ԵՆ ՀԱՇՎՎՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆ ՈՒ ՆՊԱՍՏԸ

11. Բ.Գ. Միլիցիայի աշխատակիցների կենսաթոշակների ու նպաստների չափը որոշելիս, հաշվի չեն առնում ռոճիկների մշտական կապարները, փորոնք նրանք ստանում են վերջին ամսին արձակումից առաջ:

12. Մահացած թոշակառուների կենսաթոշակները հաշվվում են նույն կապարներից, որոնցից հաշվարկել էին միլիցիայի մահացած աշխատակցի կենսաթոշակը:

13. Հաշվի չեն առնվում կենսաթոշակի ու արձակման նպաստի համար.

ա) Հավելյալ վարձատրությունը, որը ստանում են մարմինների աշխատակիցները տեղական և հատուկ նախահաշիվներից.

բ) Ռոճիկի 10 տոկոս հավելումն մարմինների աշխատակիցների գործուղումների համար:

գ) Մասնագետների անհատական հավելումները.

դ) Տոկոսային հավելումները առանձնապես հեռավոր վայրերի համար.

# ՏԱՐԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

## Հոդ. 20 «Կանոնադրության»

11. Տարիների ծառայության կենսաթոշակ վճարվում է յերկարատև արձակուրդ գնացած, պահեստում թողնված կամ ծառայությունից բոլորովին հեռացած գերակետ ծառայության գլխավորական ու շարքային կազմի անձերին, Բ. Գ. Միլիցիայի գլխավորական կազմի անձերին, յեթե նրանք մինչև հեռացվելը կադրերից կամ ռեզերվից և կամ գերակետ ծառայությունից՝ ծառայել են 20 և ավելի տարի:

## Հոդ. 27 «Կանոնադրության»

15. Քսան տարի ծառայած անձերին կենսաթոշակը տրվում է ռոճկի 50 տոկոսի չափով:

Քսան տարուց ավելի ծառայության յուրաքանչյուր տարվա համար՝ կենսաթոշակի չափն ավելացվում է 4 տոկոսով, իսկ 25 տարուց ավելի՝ յուրաքանչյուր տարվա համար 6 տոկոսով:

Յերեսուն տարի ծառայած անձերի կենսաթոշակը տրվում է ռոճկի 100 տոկոսով:

## Հոդ. 4. «Կանոնադրության»

16. Աշխատանքի հերոսներն այն անձերից, վորոնց վրա տարածվում է «Պետապահովության կանոնադրությունը», նաև այդ անձերի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ընտանիքները կենսաթոշակի իրավունք ունեն, անկախ իրենց տարիների ծառայությունից, համահավասար հիմունքներով 30 տարի և ավելի ծառայած անձերի հետ:

Հոդ. 9 «Կանոնադրության».

17. Սույն «Կանոնադրության» համաձայն հաշմանդամության կենսաթոշակի և ծառայության տարիների կենսաթոշակի իրավունք ունեցող անձն ստանում է այդ կենսաթոշակներից միայն մեկն ըստ իր ընտրության:

ԳԼՈՒԽ VI

## ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Հոդ. 12 և 13-րդ «Կանոնադրության»

18. Հաշմանդամության կենսաթոշակ արվում է միլիցիայի հեռացված աշխատակիցներին, վորոնք ունեն առաջին 4 խմբակների հաշմանդամություն:

19. Այն անձերն, վորոնք հաշմանդամ են դարձել կարգերում կամ ռեզերվում ծառայելիս զերակետ ծառայության ժամանակ կամ մինչև ծառայությունից հեռանալուց 2 տարին լրանալը—կենսաթոշակը վճարվում է.

ա) Առաջին 3 խմբակներին պատկանող հաշմանդամության դեպքում, անկախ այդ հաշմանդամությունն առաջացնող պատճառներից և ծառայության տարիների ժամանակից.

բ) Չորրորդ խմբակին պատկանող հաշման-

դամության և 10 ու ավելի տարի ծառայելու համար—անկախ հաշմանդամությունն առաջացնող պատճառներից, իսկ այդ ծառայության տարիները չունենալիս՝ միայն այն դեպքում, յեթե այդ հաշմանդամությունն առաջացել է Բ. Գ. Միլիցիայում ծառայելու հետ կապված պատճառներից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից:

Հոդ. 16 «Կանոնադրության»

20. Հաշմանդամության կենսաթոշակները վճարվում են հետևյալ չափերով.

| | Հիմնական յեվ լրացուցիչ կո-պարների տոկոսներ | | | |
|---|---|---|---|---|
| | Հաշմանդամ 1 խմբ. | Հաշմանդամ 2 խմբ. | Հաշմանդամ 3 խմբ. | Հաշմանդամ 4 խմբ. |
| ա) Յեթե հաշմանդամությունն առաջացել է Բ. Գ. Միլիցիայի շարքերում ծառայությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդության պատճառներից | 100 | 75 | 50 | 25 |
| բ) Յեթե հաշմանդամությունն առաջացել է այլ պատճառներից | 70 | 50 | 35 | 25 առնվազը 10 տարի ծառայության համար |

**Ծանոթություն**.— *Հաշմանդամության խմբակը փոխվելու դեպքում համապատաս-խանորեն փոխվում է և կենսաթոշակի չափը:*

21. *Այն դեպքերում, յերբ հաշմանդամու-թյունը տեղի չի ունեցել կադրերում կամ ռե-զերվում ծառայելու ժամանակ կամ գերակա ծառայության ժամանակ, նախընթաց հոդվա-ծում նշված կենսաթոշակի չափերը ավելաց-վում են 10 տոկոսով, յեթե զինվորական ծառա-յողը կամ Բ. Գ. Միլիցիայի աշխատակիցը ծա-ռայել է 10 տարի:*

*Յեթե ծառայել է 10 տարուց ավելի, ապա նրա կենսաթոշակի չափերը, բացի այդ՝ ավելա-նում են՝ 10 տարուց ավելի ամեն մի տարվա համար 1 տոկոսով, 15 տարուց ավելի—2 տոկո-սով, 20 տարուց ավելի—4 տոկոսով, և 25 տա-րուց ավելի—այդ կապարների 6 տոկոսով:*

*Սակայն տարիների ծառայության համար տրվող բոլոր այդ հավելումներով կենսաթոշա-կի ընդհանուր չափը չի կարող ռոճկի 100 տոկո-սից ավելի լինել:*

*Հոդ. 19 «Կանոնադրության»*

22. *Հաշմանդամության կենսաթոշակը հե-տևյալ չափերից պակաս չպետք է լինի.*

| | Հեռավոր վայրերում ապրելու դեպքում | Մնացյալ վայրերում ապրելու դեպքում |
|---|---|---|
| *ա) 1 խմբակին պատկանող հաշմանդամի համար* | *50 ռ. ամսական* | *40 ռ. ամսական* |
| *բ) 2 խմբակի հաշմանդամների համար . .* | *40 » »* | *30 » »* |
| *գ) 3 խմբակի հաշմանդամների համար . . . .* | *25 » »* | *20 » »* |

Ծանոթություն.—*Բնակության վայրը փոխելու դեպքում համապատասխանորեն փոխվում է և կենսաթոշակի չափը:*

### ԳԼՈՒԽ VII

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ԿԵՐԱԿՐՈՂԻՑ ԶՐԿՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

*Հոդ.* 31 *«Կանոնադրության»*

23. *Կերակրողից զրկվելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեն կերակրողի լիակատար խնամքի տակ գտնվող միլիցիայի աշխատակիցների, նաև այդ անձերի թվից յեղած թոշակառուների ընտանիքների հետևյալ անդամները.*

*ա) Զավակները, յեղբայրները և քույրերը* 18 *տարեկանից պակաս.*

բ) Զավակները, յեղբայրները և քույրե-
րը 18 տարեկանից բարձր, յեթե նրանք սովո-
րում են տեխնիկումներում, բանվորական ֆա-
կուլտետներում և բարձրագույն կրթական հաս-
տատություններում, կամ յեթե նրանք մինչև
18 տարեկանի հասնելը կորցրել են աշխատու-
նակությունը.

գ) Զառամյալ կամ անաշխատունակ ծնող-
ները ու ամուսինը.

դ) Ծնողներից մեկը կամ ամուսինը, ան-
կախ հասակից ու աշխատունակությունից,
յեթե նա զբաղված է միլիցիայի աշխատակից-
ների և նրանց թվից յեղած թոշակառուների 8
տարեկանի չհասած յերեխաների, յեղբայրների
և քույրերի խնամքով:

Լիակատար խնամքի տակ գտնվող են հա-
մարվում այն անձինք, վորոնց գոյության
մշտական ու հիմնական աղբյուր են հանդիսա-
նում ընտանիքի կերակրողից ստացվող օգ-
նությունը:

Զառամյալ են համարվում՝ 60 տարեկանի
հասած այր մարդիկ և 55 տարեկանի հասած
կանայք:

Անաշխատունակ են համարվում հաշման-
դամության առաջին յերեք խմբերին պատ-
կանող հաշմանդամները:

Վորդեգրվածներն ու վորդեգրողներն ա-
պահովվում են ծագումով ազգականների հետ
հավասար հիմունքներով:

24. Միլիցիայի մահացած աշխատակցի կամ

թոշակառուի հետ Զագսում չգրանցված կենակցությամբ ապրած ամուսինը կենսաթոշակի իրավունք ունի կերակրողից զրկվելիս այն դեպքում, յեթե նրանց ամուսնական հարաբերությունները կհաստատվեն դատական կարգով:

25. Միլիցիայի աշխատակիցների յեղբայրներն և քույրերը, վորոնք գտնվում եյին նրանց խնամքի տակ, յեթե ունեն աշխատունակ ծնողներ, իրավունք ունեն կենսաթոշակ ստանալ կերակրողից զրկվելու դեպքում այն ժամանակ, յերբ հաստատվի, վոր ծնողներն ի վիճակի չեն իրենց յեկամուտներով կամ աշխատավարձով նրանց պահել:

Հոդ. 42. «Կանոնադրության».

26. Անաշխատունակ և զառամյալ ծնողներին և ամուսնուն կերակրողից զրկվելու դեպքում կենսաթոշակ տրվում է միայն այն դեպքում, յերբ հաշմանդամությունը տեղի յե ունեցել կամ կենսաթոշակ ստանալու իրավունք տվող հասակը լրացել է կերակրողի մահից հետո յերկու տարի լրանալուց առաջ:

27. Միլիցիայի մահացած աշխատակիցներից առանձին ապրող ծնողների, յեղբայրների կամ քույրերի խնամքը հաստատվում է հետևյալ փաստագրերով. փոստային դրամական փոխադրությունների կտրոններով—վորպես ապացույց մահացածից մշտապես նյութական ոգնություն ստանալու մասին և տնային վարչությունների, գյուղխորհրդների,

տեղական գործկոմների կամ միլիցիայի մարմինների հավատարմագրերը, վորպես ապացույց, վոր մահացածի նյութական ոգնությունը յեղել ե նրանց գոյության հիմնական աղբյուրը:

Այն դեպքում, յերբ չեն պահպանվել վերոհիշյալ փաստաթղթերը, մահացած կերակրողի խնամքի տակ գտնվելու փաստը պետք ե հաստատվի դատական կարգով:

Հոդ. 32 «Կանոնադրության»

28. Յուրաքանչյուր անգամ Գլխավոր Վարչության պետի հատուկ կարգադրությամբ կերակրողից զրկվելու դեպքում կենսաթոշակը կարող ե տրվել միլիցիայի աշխատակիցների և նրանց մեկից թոշակառուների խնամքի ներքո գտնվող այն զավակներին, յեղբայրներին և քույրերին, վորոնք կորցրել են աշխատունակությունն 18 տարեկան հասնելուց հետո, յեթե նրանք իրավունք չունեն կենսաթոշակ ստանալ սոցիալական ապահովագրության կարգով:

Հոդ. 33 «Կանոնադրության»

29. Կադրերում կամ ռեզերվում ծառայության ժամանակ կամ դերակետ ծառայության ժամանակ մահացած անձերի ընտանիքներին, կերակրողից զրկվելիս, տրվում ե կենսաթոշակ անկախ կերակրողի մահվան պատճառներից:

Հոդ. 34. «Կանոնադրության»

30. Առանց կենսաթոշակի ծառայությու-

նից հեռանալուց հետո մինչև 2 տարին լրանալը մահացած անձերի ընտանիքներին, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակ է տրվում այն դեպքում, երբ կերակրողի մահվան պատճառները կապված են միլիցիայում ծառայության պարտականությունները կատարելու հետ: Առանց կենսաթոշակի ծառայությունից բոլորովին հեռանալուց հետո մինչև 2 տարին անցնելը ուրիշ պատճառներից մահացած վերոհիշյալ անձանց ընտանիքներին, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակ կարող է տրվել յուրաքանչյուր անգամ համապատասխան Գլխավոր Վարչության պետի հատուկ կարգադրության հիման վրա, եթե այդ ընտանիքներն իրավունք չունեն կենսաթոշակ ստանալ սոցիալական ապահովագրության կարգով:

Հոդ. 35. «Կանոնադրության»

31. Առանց կենսաթոշակի հեռացված յերկու տարին լրանալուց հետո մահացած անձերի ընտանիքներին, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակ վճարվում է այն դեպքերում, երբ կերակրողի մահն առաջացել է զորահավաքում զինվորական ծառայության պարտականությունները կամ ոպերատիվ առաջադրանքները կատարելու հետ կապված պատճառներից, կամ հետագա յերկու տարվա ընթացքում:

Հոդ. 46 «Կանոնադրության»

32. Իբրև բացառություն, կերակրողից

զրկվելիս, կենսաթոշակ կարող է տրվել § 23-ում (Հոդ. 31-րդ «Կանոնադրության») նշված ընտանիքի անդամներին, վորոնք ժամա–նակի ապրել են մեռածի խնամքի տակ, յեթե նրանք կարոտ են պետական օգնության:

Այս դեպքում կենսաթոշակը տրվում է յուրաքանչյուր անդամ համապատասխան Գոր–ծավոր Վարչության պետի կարգադրության հիման վրա և չի կարող կենսաթոշակն ավելի լինել § 36—ում (Հոդ. 44-րդ «Կանոնադրու–թյան») նշված չափերից, և հատուցվում է ամ–բողջական խնամարկյալներին տրվող կենսա–թոշակից դուրս:

Հոդ. 8. «Կանոնադրության»

33. Խ.Ս.Հ.Մ. շքանշանով, պատվո հեղա–փոխական զենքով պարգևատրված մահացած անձի ընտանիքի կենսաթոշակը հաշվելիս՝ ռո–ճիկներին ավելացվում է լրացուցիչ դրամա–կան հատուցը շքանշանի կամ զենքի համար, անկախ այն հանգամանքից, թե ստանում էր արդյոք մահացած կերակրողն այդ հատուցը, թե՞ վոչ:

Հոդ. 37. «Կանոնադրության»

34. Նախորդ հոդվածում նշված ընտանիք–ներին, կերակրողից զրկվելու դեպքում, կեն–սաթոշակը տրվում է հետևյալ չափերով.

| | Մեռած կերակրողի ռոճկի կոպարների տոկոսները | | |
|---|---|---|---|
| | 3 հոգու և ավելի | 2 հոգու | 1 հոգու |
| ա) Յեթե կերակրողի մահը առաջացել է ծառայության հետ կապված պատճառներից. կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով . | 100 | 75 | 50 |
| բ) Յեթե կերակրողի մահը առաջացել է այլ պատճառներից . | 70 | 50 | 35 |
| գ) Յեթե կերակրողը ծառայել է 25 և ավելի տարիներ, անկախ մահվան պատճառներից . . . . . . | 100 | 75 | 50 |

Հոդ. 38 «Կանոնադրության»

35. Այն դեպքում, յերբ կերակրողի մահը առաջացել է կադրերում կամ ռեզերվում ծառայելու ժամանակ կամ թե չէ դերակետ ծառայության ժամանակ, կենսաթոշակի նախորդ հոդվածում նշված չափերը ավելացվում են ռոճկի 10 տոկոսով, յեթե մեռածը ծառայել է 10 տարի:

Յեթե մեռածը ծառայել է 10 տարուց ավելի, ապա բացի այդ ընտանիքին տրվող կենսաթոշակի չափը 10 տարուց անց յուրաքան-

չյուր տարվա համար ավելացվում է այդ կոպարների 1 ռուբլով, 15 տարուց անց—2 ռուբլի, 20 տարուց անց—4 ռուբլի և 25 տարուց անց—6 ռուբլի:

Սակայն կենսաթոշակի ընդհանուր չափը մնացածի տարիների ծառայության համար տրվող հավելումներով չի կարող գերազանցել ռոճիկի 100 ռուբլու, իսկ Խ.Ս.Հ. Միության շքանշանով կամ պատվո հեղափոխական զենքով պարգևատրված անձանց ընտանիքների համար այդ կապարների և շքանշանի կամ զենքի համար տրվող լրացուցիչ դրամական վճարի 100 ռուբլու:

Հոդ. 44 «Կանոնադրության»

36. Կերակրողից զրկվելու համար տրվող կենսաթոշակը չի կարող հետևյալ չափերից պակաս լինել.

| | Հեռավոր վայրերում ապրելու դեպքում | Մնացած վայրերում ապրելու դեպքում |
|---|---|---|
| ա) Երեք և ավելի հոգու . . . . . . | ամսական 50 ռ. | ամսական 40 ռ. |
| բ) Երկու հոգու | » 40 » | » 30 » |
| գ) Մեկ հոգու . . | » 25 » | » 20 » |

Ծանոթություն.—Բնակության վայրը փոխելու դեպքում համապատասխանորեն փոխվում է նաև կենսաթոշակի չափը:

Հոդ. 45 «Կանոնադրության»

37. Սույն կանոնների 23-րդ կետում (Հոդ. 31-րդ, «Կանոնադրության») նշված ընտանիքի անդամներից յուրաքանչյուրն իրավունք ունի ստանալ՝ ապահովման յենթակա ընտանիքի բոլոր անդամներին նշանակած կենսաթոշակի ընդհանուր գումարի հավասար բաժինը։

Հոդ. 39. «Կանոնադրության»

38. Թոշակառուների ընտանիքներին, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակը տրվում է անկախ կերակրողի մահվան պատճառներից, յեթե մահը տեղի յե ունեցել նախ քան 2 տարի անցնելը ծառայությունից արձակվելուց։

Հոդ. 40 «Կանոնադրության»

39. Յերբ թոշակառույի մահը տեղի յե ունեցել ծառայությունը թողնելուց յերկու տարի անցնելուց հետո, ապա նրա ընտանիքին, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակը վճարվում է 2 դեպքում.

ա) յեթե թոշակառուի մահն առաջացել է ծառայության պարտականությունների հետ կապված ոպերատիվ առաջադրանքները կատարելու ժամանակ կամ հետագա յերկու տարվա ընթացքում, կամ

բ) յեթե թոշակառուի մահն առաջացել է ուրիշ պատճառներից և ընտանիքն իրավունք չունի սոցիալական ապահովագրության կարգով կենսաթոշակ ստանալ և կամ կերակրողից

զրկվելու դեպքում սոցիալական ապահովա-գրության կարգով. ստացվող կենսաթոշակը պակաս է այն կենսաթոշակից, որը մահացած թոշակառուն ստանում էր Պետապահովով. սույն կանոնադրության համաձայն:

Հոդ. 41 «Կանոնադրության»

40. Վերոհիշյալ 39 և 40 հոդվածներում նշված ընտանիքներին կերակրողից զրկվելիս կենսաթոշակը տրվում է հետևյալ չափերով.

| | Մեռած կերակրողի անձերի կազմը. %-ը | | |
|---|---|---|---|
| | 3 հոգի և ավելի | 2 հոգի | 1 հոգի |
| ա) եթե մեռածը հաշմանդամության կենսաթոշակ էր ստանում և հաշմանդամությունը առաջացել էր ծառայության հետ կապված պատճառներից կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով . . . | 100 | 75 | 50 |
| բ) եթե մեռածը հաշմանդամության կենսաթոշակ էր ստանում և հաշմանդամությունն առաջացել էր ուրիշ պատճառներից . . . . . . . | 70 | 50 | 35 |

| | Մեռած կերակրողի ռոճիկի կոպար. %-ը | | |
|---|---|---|---|
| | 3 հոգու և ավելի | 2 հոգու | 1 հոգու |
| գ) յեթե մեռածը կենսաթոշակ եր ստանում 25 և ավելի տարիների ծառայության համար կամ յեթե մեռածը կենսաթոշակ եր ստանում 25 տարուց պակաս ծառայած տարիների համար և միաժամանակ ծառայության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետ կապված հաշմանդամություն ուներ . | 100 | 75 | 50 |
| դ) յեթե մեռածը կենսաթոշակ եր ստանում 25 տարուց պակաս տարիների ծառայության համար և «գ» կետում նշված հաշմանդամություն չուներ . . . . . . . . . . | 70 | 50 | 35 |

## ԳԼՈՒԽ VIII

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ

Հոդ. 10 «Կանոնադրության»

41. Բացառիկ յերախտիքներ ունեցող անձերին և սրանց ընտանիքներին, վորոնք ոգտվում են ներկա «Կանոնադրության» իրա—

ֆոնդերից, կարող են անձնական կենսաթոշակներ տալ նորմալ կենսաթոշակներից բարձր չափով:

Անձնական (անհատական) կենսաթոշակը նշանակվում է ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին:

## ԳԼՈՒԽ IX

## ՆՊԱՍՏՆԵՐ

### Ա. Արձակման նպաստ (Выходное пособие)

Հոդ. 49. «Կանոնադրության»

42. Արձակման նպաստ է տրվում միլիցիայի աշխատակիցներին կադրերից կամ ռեզերվից կամ թե գերակետ ծառայությունից արձակվելու դեպքում:

Հոդ. 50 «Կանոնադրության»

43. Արձակման նպաստը տրվում է հետևյալ չափերով.

ա) յեթե արձակվածը ծառայել է միլիցիայում 3 տարուց վոչ պակաս և կենսաթոշակ ստանալու իրավունք չունի—մեկ և կես ամսվա ռոճկի չափով և 5 տարուց ավելի ծառայության յուրաքանչյուր տարվա համար և վճարվում հավելումն քառորդ ամսվա ռոճկի չափով:

բ) յեթե արձակվածը կենսաթոշակ ստանալու իրավունք ունի կամ ծառայել է 3 տարուց պակաս՝ կես ամսվա ռոճկի չափով:

44․ Ե․Գ․ Մելեցյանի աշխատակիցներին, վորոնք հեռացվել են իրենց ցանկությամբ, արձակման նպաստ չի տրվում։

## Բ. Նպաստ յերեխայի ծննդյան առթիվ

Հոդ․ 47 «Կանոնադրության»

45․ Յերեխա ծնվելու դեպքում կանանցից, վորոնք գտնվում են Ե․Գ․ Մելեցյանի աշխատակիցների կամ սրանց թվից թոշակառուների խնամքի տակ, անկախ այն հանգամանքից, թե նրանց ամուսնությունն գրանցված է Զագսում, նրանց տրվում է նորածին յերեխային խնամելու և կերակրելու համար 90 ռուբլ․ նպաստ։

## Գ. Թաղման նպաստ

Հոդ․ 48․ «Կանոնադրության»

46 Թաղման նպաստ տրվում է․

ա) Ե․Գ․ Մելեցյանի աշխատակիցներին և սրանց թվից թոշակառուներին նրանց խնամքի ներքո յեղած ընտանիքի վորևէ անդամի մահվան դեպքում։

բ) Ե․Գ․ Մելեցյանի աշխատակիցների և սրանց թվից թոշակառուների խնամքի ներքո գտնվող ընտանիքներին կերակրողի մահվան դեպքում։

գ) Ե․Գ․ մելեցյանի աշխատակիցների թըվից այլ անձերի ընտանիքներին, կերակրողի մահվան դեպքում, յեթե նրա մահը տեղի յե



413—2

ունեցել ծառայության ժամանակ կամ Բ. Գ. Միլիցիայի ոպերատիվ առաջադրանքները կատարելիս:

գ) Կերակրողից զրկվելու հետևանքով կենսաթոշակ ստացող ընտանիքներին—ընտանիքի այն անդամի մահվան դեպքում, որը կենսաթոշակ էր ստանում այս կանոնադրության հիման վրա:

47. Նախորդ հոդվածում նշված անձերին նպաստ է տրվում այն դեպքում, եթե նրանք մեռյալի թաղման համար ծախսեր ունեն, և տրվում է հետևյալ չափերով.

ա) 10 տարեկան և ավելի բարձր հասակի մեռյալների թաղման համար—40 ռուբլի:

բ) 10 տարեկանից ցածր մեռյալների թաղման համար—20 ռուբլի.

գ) Բ. Գ. Միլիցիայի աշխատակիցների թաղման համար 120 ռուբլի, երբ մահը տեղի է ունեցել ոպերատիվ գործողություններ կատարելիս:

48. Թաղման նպաստը տրվում է Բ. Գ. Միլիցիայի աշխատակիցների կամ նրանց թվից թոշակառու ընտանիքի հետևյալ անդամների մահվան դեպքում, որոնք գտնվում են նրանց խնամքի տակ և ապահովագրված չեն—ա) կինը և ծնողները. բ) 18 տարեկան չհասած զավակները (հարազատ կամ որդեգրված), եղբայրները, քույրերը կամ այդ հասակից բարձր, եթե նրանք ուսանում են բանֆակներում, տեխնիկումներում և

*բարձրագույն դպրոցներում և կամ անաշխատունակ են: Անաշխատունակ ծնողներ ունեցող յեղբայրների և քույրերի թաղման նպաստ տրվում է այն դեպքում, յեթե ծնողները գոյության վոչ մի նյութական միջոց չունեն:*

*Մեռյալ ծնված յերեխայի թաղման նպաստ տրվում է այն դեպքում, յեթե չեր տրվել յերեխայի ծննդյան համար նպաստ:*

49. *Թաղման նպաստի վճարումն կատարվում է.*

*ա) կադրերում, ռեզերվում կամ դերակետ ծառայության մեջ յեղած Բ.Գ. Միլիցիայի աշխատակիցների կամ նրանց ընտանիքների անդամների թաղման համար—ըստ այդ անձերի ծառայության տեղի.*

*բ) Թոշակառուների և սրանց ընտանիքների անդամների թաղման համար—կենսաթոշակ վճարող հիմնարկների կողմից:*

## Դ. Նպաստ կերակրողից զրկվելու դեպքում

*Հոդ.* 51 *«Կանոնադրության»*

50. *Կերակրողից զրկվելիս նպաստ է տրվում այն դեպքերում, յերբ նրա ամբողջական խնամքի տակ գտնվող ընտանիքն իրավունք չունի կենսաթոշակ ստանալ այս Կանոնադրության համաձայն և միանգամայն զուրկ է գոյության միջոցներից:*

*Այդ նպաստը տրվում է.*

*ա) Կադրերում կամ ռեզերվում ծառա-*

յության ժամանակ մեռած Ի. Վ. Միչուրինի աշխատակիցների ընտանիքներին.

բ) Զորահավաքին կամ ժամանակավոր մոբիլիզացիային ծառայության, պարտականությունները կատարելու հետ կապված պատճառներից մահացած Ի. Վ. Միչուրինի աշխատակիցների ընտանիքներին.

գ) Այս կանոնադրության համաձայն Ի. Վ. Միչուրինի կենսաթոշակ ստացող մեռած աշխատակիցների ընտանիքներին:

Հոդ. 52 «Կանոնադրության»

51. Կերակրողից զրկվելու դեպքում նպաստ է տրվում հետևյալ չափերով.

ա) Նախորդ հոդվածի «ա» և «բ» կետում նշված ընտանիքներին—մեկ ամսվա ռոճիկի չափով.

բ) Նախորդ հոդվածի «գ» կետում նշված ընտանիքներին—մեկ ամսվա կենսաթոշակի չափով, որը ստանում էր կերակրողը:

## ԳԼՈՒԽ X

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՑ ՈՒ ՆՊԱՍՏԻՑ ԶՐԿՎԵԼԸ

Հոդ. 61 և 68 «Կանոնադրության»

52. Հաշմանդամության և ծառայության տարիների կենսաթոշակներ, ինչպես և ծառայության տարիների համար արձակման նպաստ ստանալու իրավունք չունեն.

ա) Խորհուրդներում ընտրելու իրավունք չունեցող անձինք.

բ) զինվորական ծառայողները, որոնք հեռացվել են քաղաքական կամ բարոյական պատճառներով ծառայելուն չհամապատասխանելու հետեվանքով և հեռացվել են առանց զինապետական կազմում հաշվառնելու։

գ) այն անձինք, որոնք քաղաքացիական հիմնարկություններում և ձեռնարկություններում զրկված են ծառայությունից առաջին կատեգորիայով.

դ) այն անձինք, որոնք (դատական կամ վարչական կարգով) դատապարտված են աքսորման, կորցնելով կամ չկորցնելով խորհուրդներում ընտրելու իրավունքը դատապարտված են տարագրման կամ աքսորի հատուկ ցուցակներում՝ նշված պետական և այլ առանձնապես սոցիալապես վտանգավոր հանցագործությունների համար։

Ծանոթություն 1․ Այն անձանց կատեգորիաները, որոնք խորհուրդներում ընտրելու իրավունք չունեն, նշված են խորհուրդների ընտրությունների վերաբերյալ հրահանգներում։

Ծանոթություն 2․ Պետական և զինվորական հանցագործությունների «դ» կետ. նախատեսված ցուցակները սահմանում է ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհուրդը, իսկ այլ առանձնապես սոցիալապես վտանգավոր հանցագործությունների համար—դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդը։

Հոդ. 62 «Կանոնադրության»

53. Կերակրողից զրկվելու դեպքում կենսաթոշակի ստանալու իրավունք չունեն.

ա) մեռնելու պահին նախորդ հոդվածում հիշված կատեգորիաներին պատկանող անձանց ընտանիքների անդամները.

բ) ընտանիքների այն անդամները, վորոնք պատկանում են այդ կատեգորիաներին:

Հոդ. 63 «Կանոնադրության»

54. Նախորդ 61 և 62 հոդվածները («Կանոնադրության») չեն տարածվում այն անձանց վրա, վորոնց ընտրական հանձնաժողովների կողմից ձայնազուրկների ցուցակների մեջ մտցնելը և օրինալ է ճանաչվել վերադաս մարմինների կողմից, ինչպես և այն անձանց վրա, վորոնք անչափահասության պատճառով զրկված են խորհուրդների ընտրական իրավունքից:

Հոդ. 65 «Կանոնադրության»

55. Այն անձինք, վորոնք դատական կամ վարչական կարգով դատապարտված են ազատազրկման, կորցնելով կամ չկորցնելով խորհուրդներում ընտրելու իրավունքը, դատապարտված են տարագրման կամ աքսորի հատուկ ցուցակներում չնշված հանցագործությունների համար, կենսաթոշակ ստանալու իրավունք չունեն միայն սոցիալական պաշտպանության միջոցը կրելու ընթացքում:

Սոցիալական պաշտպանության միջոցը կրելուց հետո նրանք իրավունք ունեն կենսաթոշակ ստանալ ընդհանուր հիմունքներով։

Այն անձանց ընտանիքները, որոնց մահը տեղի չի ունեցել սոցիալական պաշտպանության միջոցի ժամանակաշրջանը լրանալուց հետո, կերակրողից զրկվելու դեպքում, կենսաթոշակ ստանալու իրավունք ունեն ընդհանուր հիմունքներով։

Հոդ. 66 և 69 «Կանոնադրության»

56. Հատուկ ցուցակներում նշված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված անձինք, մինչև գործի ավարտումը, իրավունք չունեն կենսաթոշակ ստանալ։

Ուրիշ հանցագործությունների համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց կենսաթոշակ տալը դադարեցվում է, որպես կանխարգել միջոց կալանքի ենթարկելու օրից, յերկու ամիս անցնելուց հետո։

Մինչև դատավարության վերջանալը արձակման դեպքում ստանալու իրավունք չունեն այն անձինք, որոնք քրեական պատասխանատվության են ենթարկված այնպիսի հանցագործությունների համար, որոնց համար դատարանը կարող է ազատազրկման դատապարտել։

Յեթե քրեական պատասխանատվության

յենթարկվածը կոոպերացիայի կամ կոոպերա-
տիվային սոցիալական ապահովության այն-
պիսի միջոցի, վորը չի զրկում նրան կենսա-
թոշակի իրավունքից, ինչպես նաև գործի
դադարեցման դեպքում, այդ կենսաթոշակը
տրվում է նրան քրեյական դատապարտության
ժամանակի համար ընդհանուր հիմունքներով:

Հոդ. 64, 67 և 70 «Կանոնադրության».

57. Կենսաթոշակը կարող է նշանակվել կամ վերանորոգվել, իսկ պատշաճ դեպքերում արձակման նպաստ տրվել Բ.Գ. Միլիցիայի հատուկ տնորինությամբ.

ա) յերբ խորհուրդներում ընտրելու իրավունք չունեցող կամ առաջին կատեգորիայի ծառայությունից զանձին ընտրելու կամ վերստին ծառայելու իրավունք կարգի.

բ) յերբ պետական կամ այլ առանձնապես սոցիալական վտանգավոր հանցագործության համար կենսաթոշակի իրավունքից զրկվող սոցիալական պաշտպանության դատապարտված անձը կրել է սոցիալական պաշտպանության միջոցը.

գ) այն անձանց ընտանիքներին, վորոնք մահացել են խորհուրդներում ընտրելու և հիմնարկներում ծառայելու իրավունքը վերստին ստանալուց հետո կամ սոցիալական պաշտպանության միջոցը կրելուց հետո, բայց մեռնելու պահին չեն դիմել իրենց կենսաթոշակ նշանակելու կամ վերականգնելու

համար վերոբերյալ «ա» և «բ» կետերի հիման վրա.

գ) այն անձերի ընտանիքներին, վորոնք քրեական պատասխանատվության են յենթարկված հատուկ ցուցակներով նշված հանցագործությունների համար և վախճանվել են մինչև քրեական դատավարության ավարտը.

Ծանոթություն. *Այն անձանց ընտանիքները, վորոնք քրեական պատասխանատվության են յենթարկվել այլ հանցագործությունների համար և մահացել են մինչև քրեական գործի ավարտը, կերակրողից զրկվելիս, կենսաթոշակի իրավունք ունեն ընդհանուր հիմունքներով:*

## ԳԼՈՒԽ XI

## ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ ՈՒ ՆՊԱՍՏՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՑԵՎ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ

*Հոդ.* 53 *«Կանոնադրության»*

38. *Կենսաթոշակ նշանակվում է, առանց այդ մասին հատուկ հայտարարության ներկայացվելու շահագրգռված անձերի կողմից, Բ. Գ. Միլիցիայի այն աշխատակիցներին, վորոնց կենսաթոշակի իրավունքը հաստատվել է արձակման հետ միասին, նաև Բ. Գ. Միլիցիայի շարքերում յեղած միջոցին մահացած աշխատակիցների ընտանիքներին:*

*Մնացած դեպքերում կենսաթոշակ ստա—*

նալու իրավունք ունեցող անձերը պետք է հայտներ ներկայացնեն կենսաթոշակ նշանակելու համար:

Կենսաթոշակը բոլոր դեպքերում պետք է նշանակվի այդ իրավունքը հաստատվելու օրից վոչ ուշ քան 2 ամսվա ընթացքում:

Հոդ. 54 «Կանոնադրության»

59. Յերբ կենսաթոշակը պատշաճ մարմիններից անկախ պատճառներով նշանակվել է ուշացումով, ապա անցած ժամանակի համար կենսաթոշակը վճարվում է վոչ ավելի քան 6 ամսվա համար:

## ԳԼՈՒԽ XII

## ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 58 «Կանոնադրության»

60. Կենսաթոշակով արձակվող առնվազն 3 տարի ծառայած անձինք, բացի առաջին 3 խմբակներին դասվող հաշմանդամներից, կարող են իրենց ցանկությամբ ստանալ կենսաթոշակի հաշվին արձակման ժամանակ կանխավճար մեկ ամսվա ռոճկի չափով, կցելով սրան հավելումն հինգ տարվա ծառայության, յուրաքանչյուր տարվա համար ամսական ռոճկի մի քառորդ մասով, սակայն բոլոր դեպքերում կանխավճարը չի կարող գերազանցել 5 ամսվա ռոճկի գումարը:

Կանխավճարը չինվում է կենսաթոշակի

համապատասխան հերթական վճարումներից հետ պահելու միջոցով սույն կանոնադրության հրահանգով սահմանված կարգով:

61. Սույն կանոնադրության համաձայն կենսաթոշակ ստացող անձինք և այդ թոշակառուների ընտանիքների անդամները իրավունք ունեն ապահովագրված բանվորների և նրանց ընտանիքների անդամների հետ համահավասար հիմունքներով ձրիաբար ստանալ բժշկական օգնության բոլոր տեսակները (ներառյալ դեղորայքը), նաև պրոտեզներ առողջարանային քաղաքացիական հիմնարկներում:

Ծառայությունից հիվանդության պատճառով հեռացվածները, որոնք չեն ստանում հիշյալ կենսաթոշակը, նմանապես իրավունք ունեն նույն հիմունքներով քաղաքացիական առողջապահիկ հիմնարկներում ստանալ բուժօգնության բոլոր տեսակները (ներառյալ դեղորայքը), նմանապես պրոտեզներ, մինչև ապաքինումն այն հիվանդությունից, որի պատճառով նրանք հեռացվել էյին:

Հոդ. 56 «Կանոնադրության»

62. Թոշակառուն, յուր համաձայնությամբ, կարող է տեղավորվել հաշմանդամների համար հատկացված հիմնարկություններում կամ հաշմանդամների ուսուցման կամ վերաուսուցման հատուկ հիմնարկություններում: 16 տարեկան չհասած թոշակառուն, ծնողների

կամ խնամակալի համաձայնությամբ, կարող և առողջապահական մանկապատանեկան կամ ուրիշ համապատասխան հիմնարկության մեջ:

Վերահիշյալ հիմնարկություններում ան-դամագրված թոշակառուների ապրուստի և առողջացման ծախսը վճարում է Բ. Գ. Միլիցիան, համապատասխան գումար հետ պահելով կենսաթոշակից:

Հոդ. 55 «Կանոնադրության»

63. Յեթե թոշակառուն վորևէ պատճառով կամ այլ յեկամուտներ ունի, ապա այս կանոնադրու-թյան հրահանգի համաձայն կենսաթոշակի վճարումը կարող է դադարեցվել ամբողջապես կամ մասամբ:

Հոդ. 59 «Կանոնադրության»

64. Թոշակառուին նրա չարաշահության հետեվանքով (աշխատավարձի ծածկելը, սխալ փաստաթղթեր ներկայացնելը, անհրաժեշտ տեղեկություններ չհայտնելը և այլն) ավե-լի վճարված կենսաթոշակի գումարները, ան-կախ նրան քրեական պատասխանատվության յենթարկելուց, հետ են պահվում կենսաթոշա-կի հետագա վճարումների ժամանակ կամ գանձվում են դատական կարգով:

ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխ. Վարչու-թյան պետ Ա. Դուլգարյան

Կազմտեսչության պետ՝ Գ. Հախումյան

## ԱՆՎԱՆԱՑԱՆԿ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

*ԲԳ Միլիցիայի հրամկազմի, վորի ծառայության տարիները հաշվում են յուրաքանչյուր որը մեկ ու կես որ*

| Գլխավոր Վարչություն | Բաղ. և Շրջանային վարչություններ | Դպրոցներ, դասընթացներ ու ջոկային միացումներ |
|---|---|---|
| 1. Վարչության պետ, նրա տեղակալ և օգնական։ | 1. Վարչությունների պետեր, որանց տեղակալներ և օգնականներ։ | 1. Դպրոցների ու դասընթացների վարիչներ, նրանց տեղակալներ ու օգնականներ, գնդերի ու դասընթացների բաժինների ու մասերի վարիչներ, որանց տեղակալներ ու օգնականներ։ |
| 2. Բաժինների ու բաժանմունքների պետեր, նրանց տեղակալներ, օգնականներ, ավագ տեսուչներ, տեսուչներ, տեսուչների օգնականներ, առանձնապես լիազորներ, օպերատիվ լիազորներ, ավագ լիազորներ, լիազորների օգնականներ, փորձագետներ։ | 2. Բաժինների ու բաժանմ. պետեր, որանց տեղակալներ, օգնականներ, ավագ տեսուչներ, տեսուչներ, տեսուչների օգնականներ, առանձնապես լիազորներ, օպերատիվ լիազորներ, լիազորների օգնականներ, փորձագետներ։ | 2. Դպրոցների ու դասընթացների հասարակային դասատուներ մասնագիտ. ու ռազմական առարկաների։ |
| 3. Վարչությունների բաժինների քարտուղարներ։ | 3. Վարչությունների ու բաժինների քարտուղարներ։ | 3. Դպրոցների ու դասընթ. համհարզներ ու քարտուղարներ, դպրոցների ու դասընթացն. պատասխանատու քարտուղարներ, ակումբների վարիչներ։ |

| Գլխավոր Վարչություն | Քաղ. և Շրջանային վարչություններ | Դպրոցներ, Դասընթացներ ու շրջային միջոցումներ |
|---|---|---|
| 4. Պարետներ, պարետների օգնականներ, պատասխանատու հերթապահներ, կալանատների պետեր և նրանց օգնականներ, կալանատների հսկիչներ | 4. Պարետներ, պարետների օգնականներ, պատասխանատու հերթապահներ, կալանատների վարիչներ և նրանց օգնականներ, կալանատների հսկիչներ | 4. Դպրոցների և դասընթ. ուսում. մասերի պետեր, ռազմամթերքի ու զենքի պետեր |
| 5. Շնաբուծարանի վարիչ, շների հրահանգիչներ և ուղեկցողներ | 5. Շնաբուծարանի վարիչ, շների հրահանգիչներ և ուղեկցողներ | 5. Դիսցիպլինների, հեծյալ [illegible]ների և դասակների պետեր |
| 6. Ակումբի վարիչ | 6. Ակումբների վարիչներ | 6. Դիսցիպլինների ու դասակների պետեր, բաժնյակների պետեր, դիսցիպլինների ու կաբինետների ղեկավարներ |
| | 7. Քաղաքային բաժանմունքների պետեր, նրանց տեղակալներ և օգնականներ | 7. Քաղղեկներ դիսցիպլինների, կաբինետների ու դասակների |
| | 8. Վարչությունների և քաղբաժանմունքների քաղուսուցիչներ, շրջանային տեսուչներ, ավագ միլիցիոներներ, [illegible] պահպանության [illegible] աշխատակիցներ | |
| | 9. Տնտ. մասերի, վարչությունների և բաժանմունքների վարիչներ | |

# Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն

## ԲՈԼՈՐ ՇՐՋԽԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

**№002**

1932 թ. սեպտեմբերի 28

Վերակառուցման շրջանում, յերբ լայն ծավալ է ընդունում սոցիալիստական շինարարությունը, անկասկած սրվում է դասակարգային պայքարը: Այդ պայմաններում ել ավելի մեծանում են միլիցիայի՝ վորպես խորհրդային իշխանության վարչական գործադիր օրգանի՝ անելիքներն ու խնդիրները:

Այդ օրգանի քաղ–բարոյական դրության և ռազմունակության բարձրացման հարցը դրված է մեր առաջ, վորպես առաջնակարգ խնդիրներից մեկը, վորը սերտորեն կապված է միլիցիայի կազմի նյութական և կենցաղային դրության բարելավման պայմանների հետ:

Կոմկուսակցությունը և խորհրդային իշխանությունը իրենց առանձնահատուկ ուշադրությունն են դարձրել այդ խնդիրների, մասնավորապես, միլիցիայի ոպերատիվ–շարային և վարչատնտեսական կազմի ու նրանց ընտանիքների նյութա–կենցաղային դրության բա–

ընդլայնման մեջ և վերացնել և տարածել այն ար-տոնությունները ժողովրդական լուսավորու-թյան, հաղորդակցման, գյուղատնտեսա-կան հարկի և բնակարանների ասպարեզում, վորոնք հատուկ օրենքով վերապահված են Կարմիր բանակի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար:

Ուղարկելով ԽՍՀՄ Որ. ժող. 1931 թվի № 33 հոդ. 247 (Բանվորա-Գյուղացիական Մի-լիցիայի կանոնադրությունը), վորտեղ հատ-ված 5-րդը վերաբերյում է ամբողջությամբ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի աշխա-տակիցների և նրանց ընտանիքների ապահո-վության ու արտոնություններին և ԽՍՀՄ Որ. ժող. 1930 թ. № 23 հոդ. 253 (Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի զինվորական ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների արտոնությունների օրենսդիր-քը), վորտեղ հատված 1-ին վերաբերյում է արտոնությունների ընդհանուր սկզբունքներին, հատված 2-րդ արտոնություններին գյուղա-տնտեսության ասպարեզում, հատված 4-րդը հարկերի և տուրքերի արտոնություններին, հատված 6-րդ բնակարանային արտոնու-թյուններին, հատված 8-րդ արտոնություններին կրթության ասպարեզում, առաջարկում եմ բոլոր միլիցիոներին սահմանել մշտական հսկո-ղություն անշեղորեն կատարելու այդ օրենք-ները տեղերում, բոլոր խախտումների դեպ-քերում ձեռք առնել ամենակտրուկ միջոցներ

վերացնելու այդպիսիք և հանցավորներին յենթարկել պատասխանատվության:

Լուրջ խախտումների դեպքում անմիջապես հայտնել վարչությանը:

Միաժամանակ անհրաժեշտ է մասսայականացնել այդ օրենքները լայն ժողովների և խորհրդակցությունների միջոցով:

Ավելացնում ենք, վոր Ֆինժողկոմատը, Կոմունալ Տնտեսության Ժողկոմատը, Լուսժողկոմատը և Հողժողկոմատը իրենց գծով համապատասխան կարգադրություն արել են տեղերին միլիցիային տրված արտոնությունները կյանքում կիրառելու համար:

Աղբիր՝ «Օրենքների ժողովածու» յերկու համապատասխան քաղվածքներով:

Միլգլխվարչության պետ՝ Ա. Դուլֆարյան

Կազմտեսչության պետ՝ Գ. Հախումյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ

(ԽՍՀՄ օրենքն. և կարգադ. ժողովածու 1930 թվի № 33 հոդ. 247)

(ՔԱՂՎԱԾՔ)

### ՀԱՏՎԱԾ V

### ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

46. *Միլիցիայի գերագույն, ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի աշխատավորները ու նրանց ընտանիքները պետական ապահովությունից օգտվում են Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի գերակետ ծառայության բարձրագույն, ավագ, միջին և կրտսեր գլխապետական կազմի անձանց և նրանց ընտանիքների հետ հավասար:*

*Ռազմական և ծովային գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի գլխապետական կազմի անձանց պետական ապահովության կարգով թոշակներ և նպաստներ նշանակելու*

իրավունքները միլիցիայի աշխատավորների և նրանց ընտանիքների նկատմամբ իրագործում են դաշնակից հանրապետությունների միլիցիայի գլխավոր վարչությունների պետերը*)։

49. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի ու նրանց ընտանիքների անդամների վրա տարածվում են բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար ժողովրդական լուսավորության, հողագործման, գյուղատընտեսության հարկերի և բնակարանների ասպարեզում օրենքներով նախատեսված բոլոր արտոնությունները։

50. Միլիցիայի օպերատիվ-շարային և վարչա-տնտեսական կազմի գործավարներն օգտվում են բնակարանային վարձի զեղչից այն տներում, ուր այդ վարձը գանձվում է տեղական խորհուրդների կապարներով։ Զեղչերի չափը սահմանում են տեղական գործա-

---

*) Սույն 46-րդ հոդվածը ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. դեկտեմբերի 3-ի վորոշման համաձայն փոխվում է այն իմաստով, վոր նշված արտոնությունները տարածվում են նաև ԲԳ. Միլիցիայի շարքային կազմի վրա. տես վերոհիշյալ վորոշումը գրքույկիս վերջում։

Հաջորդ 47 և 48-րդ հոդվածները նույն վորոշման համաձայն հանված են։

դիր կոմիտեները և քաղաքային խորհուրդ-ները:

51. Ընտանիքավոր միլիցիոներին և միլ-իցիայի գլխավոր վարչության կազմի բնակելի տարա-ծության կարիքը բավարարելու համար տեղա-կան գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդները ստանում են իրենց տրամադրու-թյան տակ գտնված նոր շինարարության բնա-կարանային ֆոնդից 5 %-ից ոչ պակաս:

52. Միլիցիայի ադմինիստրատիվ-շարքային և վարչա-տնտեսական կազմի գործավորները պարենային մատակարարման նկատմամբ հավա-սարեցված են արդյունաբերական բանվոր-ներին:

## ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք)

### ՀԱՏՎԱԾ I

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. *Այս օրենսգիրքը արտոնություններ է նախատեսնում բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների, նույնպես և բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ծառայությունից բոլորովին արձակվածների ու նրանց ընտանիքների համար։*

Ծանոթ.— *Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողներին վերաբերվում են նաև Միացյալ Պետական Քաղաքական Վարչության զորքերի և ԽՍՀ Միության ուղեկցորդ պահապանների զորքերի զինվորական ծառայողները։*

2. *Օրենսգիրքը նախատեսնում է հետևյալ արտոնությունները՝*

ա) գյուղատնտեսության ասպարիզում 2–րդ հատված),

բ) աշխատանքի և սոցիալական ապահովագրության ասպարիզում (3–րդ հատված),

գ) հարկերի ու տուրքերի վերաբերյալ (4–րդ հատված),

դ) պետական ապահովագրության վերաբերյալ (5–րդ հատված),

ե) բնակարանային (6–րդ հատված),

զ) առողջապահության ասպարիզում (7–րդ հատված),

է) կրթության ասպարիզում (8–րդ հատված),

ը) փոստային (9–րդ հատված),

թ) յերկաթուղով ու հաղորդակցության ջրուղիներով փոխադրելու ժամանակ (10–րդ հատված),

ժ) դրամական նպաստներ (11–րդ հատված),

ի) ԽՍՀ Միության հեռավոր վայրերի ծառայության վերաբերյալ (12–րդ հատված):

Ծանոթություն.—Բանվորա–գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների, նույնպես և բանվորա–գյուղացիական կարմիր բանակի ծառայությունից բոլորովին արձակվածների ու նրանց ընտանիքների պետական ապահովությունը կարգավորում է հատուկ օրենքների հիման վրա:

3. Զինվորական ծառայողի, զինապարտի կամ ծառայությունից բոլորովին արձակվածի մահից հետո նրա ընտանիքը այն արտոնությունների իրավունքը, վորոնցից նա օգտվում եր, պահպանում ե վեց ամսվա ընթացքում, յեթե որենքով ուրիշ ժամանակամիջոց չի սահմանված:

4. Զինվորական ծառայողը, զինապարտը կամ ծառայությունից բոլորովին արձակվածը խորհուրդների ընտրության իրավունքից զրկվելու դեպքում, նա ու նրա ընտանիքը կորցնում են նաև արտոնությունների իրավունքը:

Հավասարապես զինվորական ծառայողը, զինապարտը և ծառայությունից բոլորովին արձակվածը կորցնում ե արտոնությունների իրավունքը՝ ազատազրկման, քաղաքական իրավունքների սահմանափակման, աքսորման, կամ դատական կամ վարչական կարգով վտարման ժամանակի ընթացքում:
Այդ նույն ժամանակամիջոցում արտոնությունների իրավունքը կորցնում ե նաև նրա ընտանիքը:

Սակայն արտոնությունների իրավունքը չեն կորցնում այն անձինք, վորոնք խորհուրդների ընտրության իրավունքից զրկված են հոգեկան հիվանդության կամ խնամակալության տակ գտնվելու պատճառով, նույնպես և այն անձինք, վորոնք բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ռազմա-ուղղիչ զորամասերում յենթարկված են ազատազրկման կամ կալանքի:

5. Արտոնությունների իրավունք չունեն զինվորական ծառայողի, զինապարտի և ծառայությունից բոլորովին արձակվածի ընտանիքի այն անդամները, որոնք զրկված են խորհուրդների ընտրության իրավունքից:

Հավասարապես զինվորական ծառայողի, զինապարտի և ծառայությունից բոլորովին արձակվածի ընտանիքի անդամները կորցնում են ընտանիքի առանձին անդամների վերապահված արտոնությունների իրավունքը՝ ազատազրկման, քաղաքական իրավունքների սահմանափակման, աքսորի կամ դատական կամ վարչական կարգով վտարման ժամանակի ընթացքում:

Սակայն արտոնությունների իրավունքը չեն կորցնում այն անձինք, որոնք խորհուրդների ընտրության իրավունքից զրկված են հոգեկան հիվանդության կամ խնամակալության տակ գտնվելու կամ կալանքի ենթարկված լինելու պատճառով:

6. Այն զինվորական ծառայողը և զինապարտը, որ գտնվում է փախուստի մեջ, կորցնում է արտոնությունների իրավունքը: Միաժամանակ արտոնությունների իրավունքը կորցնում է նաև նրա ընտանիքը:

7. Այն բոլոր դեպքերում, երբ խախտված են արտոնությունների իրավունք ունեցող անձանց օրինական շահերը, ռայոնական գործադիր կոմիտեները, նույնպես և գյուղական, քաղաքային և գյուղատեղային խորհուրդները

պարտավոր են սեփական նախաձեռնությամբ կամ շահագրգռվածների խնդրանոք ձեռք առնել բոլոր միջոցները այդ անձանց շահերը պաշտպանելու համար:

Այդ միջոցները ձեռք չառնելու համար պաշտոնատար անձինք պատասխանատու յեն քրեական կարգով, վորպես իշխանության անգործության կամ դեպի ծառայությունը անփույթ վերաբերմունք ունենալու համար:

8. Յուրաքանչյուր դատախազ, վորը ումից էլ վոր տեղեկություն ստացած լինի արտոնությունների իրավունք ունեցող անձանց օրինական շահերը խախտելու մասին, պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռք առնել յերևան բերված խախտումները վերացնելու և խախտողներին պատասխանատվության կանչելու համար:

9. Արտոնությունների իրավունք ունեցող անձանց խնդրանոք նրանց հավաստագրեր են տրվում Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած ձևով:

Հավաստագրերը տալիս են զորամասերը և տեղական զինվորական վարչության մարմինները:

Հավաստագրեր կարող են տալ նաև ռայոնական գործադիր կոմիտեները և գյուղական, քաղաքային ու գյուղտեղային խորհուրդները, յեթե նրանք ունեն նման հավաստագրեր տալու համար անհրաժեշտ տեղեկությունները:

Ռայոնական գործադիր կոմիտեները և գյու-

դավային խորհուրդները, իսկ քաղաքներում ու բանվորական բնակավայրերում՝ միլիցիայի պարտավոր են ձրիաբար վերադարձնել նրանց հավատարմագրերի պատճենները:

Այն դեպքում, երբ արտոնությունները կարող են արվել ունեցած տվյալների հիման վրա, որոնք պետք է արվեն և առանց մասնանշված հավատարմագրերի:

10. Ըստ օրենքի արտոնությունների իրավունք ունեցող զինվորական ծառայողները, զինապարտները և ծառայությունից բոլորովին զորացրվածները, նույնպես և նրանց ընտանիքները այդ արտոնությունների հետ միասին, ընդհանուր հիմունքներով, օգտվում են նաև մնացյալ աշխատավորության համապատասխան կատեգորիաների համար սահմանված բոլոր արտոնություններից, եթե օրենքում այլ բան չի ասված:

11. Պատերազմական ժամանակ օրենսգիրքը կիրառելու սահմաններն ու կարգը որոշվում է հատուկ օրենքով:

12. Օրենսգիրքը կիրառելու հրահանգը հրատարակում են ԽՍՀՄիության ժողովրդական կոմիսարները և դաշնակից հանրապետությունների չմիավորված ժողովրդական կոմիսարները՝ համաձայնության գալով Ռազմական և Ծովային Գործերի ժողովրդական կոմիսարի կամ դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդներին կից նրա լիազորների հետ:

13. Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի ռեզերվում գտնվող գլխապետական կազմի զինվորական ծառայողների վրա տարածվում են կադրային գլխապետական կազմի զինվորական ծառայողների համար սահմանված արտոնությունները, որենսգրքի համապատասխան հոդվածներում հատուկ մատնանշված առանձին շեղումներով*):

15. «Հավաք» ասելով որենսգրքի հետագա հոդվածներում հասկացվում են կրկնողական, վարժական, կարճատև, ստուգման և զորաշարժի հավաքները, մանևրաները և ուրիշ ուսուցման պարապմունքները, փորձնական մոբիլիզացիան, նախակոչյան կամ արտազորային պատրաստություն անցկացնելու համար, իբրև հրահանգչական կազմ կանչվելը, նույնպես և այլ դեպքերում յերկրային զորամասերի փոփոխական կազմի զինվորական ծառայողներին իրենց զորամասեր կանչվելը:

16. «Յերկարատև արձակուրդ ստացածներ» ասելով որենսգրքի հետագա հոդվածներում հասկացվում են այն անձինք, վորոնք ստացել են յերկարատև արձակուրդ ինչպես հաշվելով յերկրային զորամասերի փոփոխական կազմի մեջ, նույնպես և չհաշվելով:

*) Հաջորդ 14-րդ հոդվածն հանված է:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

17. Զինվորական ծառայողների միջից բատրակներին և չքավորներին կոլխոզների վճարները մուծելու համար չքավորության կոոպերացման և կոլեկտիվացման ֆոնդերից փոխատվությունները տրվում են առաջին հերթին ու ավելի յերկար ժամանակով։

18. Անհատական այն տնտեսություններին, վորոնց մեջ կան կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողներ (բացի յերկարատև արձակուրդի ծառայողներից), վարկային ընկերությունների կազմից ամեն տեսակի նպատակային փոխատվությունները տրվում են միևնույն դրույքային վիճակ ունեցող այլ անհատական տնտեսությունների հանդեպ՝ առաջին հերթին։

19. Համատարած կոլեկտիվացման ռայոններից դուրս սակավահող և հողազուրկ այն տնտեսությունները, վորոնց մեջ կան կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողներ (բացի յերկարատև արձակուրդի ծառայողներից), մյուս բոլոր անհատական տնտեսությունների հանդեպ նախապատվության իրավունք ունեն աշխատավորական ոգտագործման հող ստանալու պետական հողային պահեստից և հողային հասարակություն-

ների տնօրինության տակ գտնվող ազատ հո-ղերից:

20. Այն տնտեսությունները, որոնց մեջ կան կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողներ, վերջիններիս բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերում գտնվելու ամբողջ ժամանակի ըն-թացքում, պահպանում են բացակա զինվորա-կան ծառայողներին հասնող հողաբաժինը:

21. Սերմացվի փոխատվության կարիք զգացող անհատական այն տնտեսություն-ները, որոնց մեջ կան կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայող-ներ (բացի յերկարատև արձակուրդ ստացողնե-րից), իրավունք ունեն սերմացվի փոխատվու-թյունը ստանալու նույն գույքային վիճակ ու-նեցող այլ անհատական տնտեսությունների հանդեպ՝ առաջին հերթին և այն էլ ավելի ձեռնտու պայմաններով:

22. Անհատական այն տնտեսություններից, որոնց մեջ կան կադրային շարքային և գլխա-պետական կազմի զինվորական ծառայողներ (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) վարձակայաններից, սերմազտիչ և զուգավոր-ման կայաններից օգտվելու համար գանձվում է ավելի պակաս վճար:

23. Անհատական այն տնտեսություններին, որոնց մեջ կան կադրային շարքային և գլխա-պետական կազմի զինվորական ծառայողներ,

(բացի չերկարատև արձակուրդ ստացողներից), տնտեսության կարիքները բավարարելու համար փայտանյութը և անտառանյութը բաց է թողնվում արտոնյալ պայմաններով, առաջին հերթին մինչև անգամ ձրի:

Նույն տնտեսություններին անտառային կողմնակի օգտագործումը (անտառային խոտհարքներ, չոր փայտ հավաքելը և այլն) վերապահվում է արտոնյալ պայմաններով, մինչև անգամ ձրի:

24. Համատարած կոլեկտիվացման ռայոններից դուրս այն տնտեսություններին, որոնց մեջ կան հեծյալ յերկրային զորամասերի փոփոխական կազմի զինվորական ծառայողներ, նպատակային փոխատվություններ են արվում շարքային ձիեր գնելու համար՝ հատկապես այդ նպատակով կազմված ֆոնդից:

25. Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերից զինվորական ծառայողի արձակվելուց հետո, տնտեսությունները պահպանում են 18, 19, 22 և 23 հոդ. հոդ. մատնանշված արտոնությունները վեց ամսվա ընթացքում:

26. Կարմիր բանակյան գաղթականական կոլխոզների համար համամիութենական գաղթականական ֆոնդերի կազմից հատկապես առանձնացվում են ամենից հարմար հողեր այնպիսի քանակությամբ, որպեսզի այդ կոլխոզների զարգացումը լիովին ապահովված լինի:

Ծանոթություն.— Գաղթականական

կոլխոզները համարվում են կարմիր բանակյան այն պայմանով՝

ա) յեթե նրանք կազմակերպվել են կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողների կողմից, բանվորա-գյուղացիական կարմիր բանակի շարքերից արձակվելուց որից սկսված մեկ տարուց ոչ ուշ, կամ յերկրային զորամասերի փոփոխական շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողների կողմից․

բ) յեթե միաժամանակ այդ զինվորական ծառայողները կազմում են կոլխոզների անդամ աշխատունակ տղամարդկանց ընդհանուր թվի կեսից ոչ պակասը։

27․ Կարմիր բանակյան գաղթականական կոլխոզների զինվորական ծառայողներին—խնդրակներին տրվում է հատուկ արձակուրդ։ Այդ արձակուրդները տալու կարգը սահմանում է Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը։

28․ Տնտեսությունը կարգավորելու համար կարմիր բանակյան գաղթականական կոլխոզներին փոխատվություններ տրվում են՝ համեմատած ուրիշ գաղթականական կոլխոզների հետ՝ 15% բարձրացրած չափով։

29․ Կարմիր բանակյան գաղթականական կոլխոզները առաջին հերթին են օգտվում գաղթողների սպասարկման հատկացված

*արտակարգների և գյուղատնտեսական մեքենա-ների, նույնպես և տրակտորային և տեխնի-կական անձնակազմի պատրաստումից և առա-ջին հերթին մատակարարվում են հանքային պարարտանյութերով, վնասատուների դեմ պայքարելու միջոցներով, գործիքներով և այլն*

ՀԱՏՎԱԾ IV

## ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ԱՐՏՈՆՈՒ-ԹՅՈՒՆՆԵՐԸ

### ԳԼՈՒԽ 1.

Այն անձանց արտոնությունները, վորոնք պարգևատրված են շքանշաններով, աշխատան-քի հերոսներին, Բ.Գ. Կարմիր Բանակի զինծա-ռայողներին (դրանց թվում և Պետ. Քաղ. Վարչության և ուղեկցորդ գործերին), հաշ-մանդամներին և այն անձանց, վորոնք ռազ մականացրած պահակային ծառայության մեջ են գտնվում, միլիցիայում և այլն:

69. *) *Սույն բերվող աղյուսակում մատ-նանշված արտոնությունները վերաբերվում են այն անհատներին, վորոնց մեջ կան՝*

*ա) Այնպիսի անձինք վորոնք, պարգևա-տրված են ԽՍՀՄ կամ դաշնակից հանրապե-տությունների մեկ կամ մի քանի շքանշաննե-*

---

*) IV *հատվածի առաջին գլխի 69-րդ, 70-րդ և 71-րդ հոդվածները բերված են նոր խմբագրությամբ. 72-րդ, 73-րդ, 74-րդ և 75-րդ հոդվածները հանված են.*

րով կամ պատվավոր հեղափոխական զենքով, և աշխատանքի հերոսները։

բ) Ժամկետավոր (անընդհատ) կամ գերակետ ծառայության բնակազմի շարքային և կրտսեր պետկազմին պատկանող զինծառայողները, բացառություն չանելով նաև 1932 թվի աշնան կանչվածներին։

գ) Բնակազմում և ուժանդակ կազմում գտնվող միջին, ավագ և բարձրագույն պետկազմի զինծառայողները։

դ) Միջին, ավագ և բարձրագույն պետկազմին պատկանողներից՝ այն անձինք, վորոնք գտնվում են յերկարատև արձակուրդում, յերկրային մասերի փոփոխական կազմում և պահեստում, վորոնք յենթարկված են կանչման նրանց համար սահմանված հավաքներին մասնակցելու կամ կանչված են վորպես հրահանգիչներ նախազորակոչյա կամ արտազորական պատրաստումները անցկացնելու համար։

յե) Կրտսեր հրամանատարական կազմի զինծառայողները, վորոնք փոխադրված են յերկարատև արձակուրդից յերկրային մասերի փոփոխական կազմը․

զ) Նախկին կարմիր գվարդիականներն ու կարմիր պարտիզանները․

է) Միլիցիայի ոպերատիվ-շարային և վարչատնտեսական կազմին պատկանող անձեր։

ը) Ռազմականացրած պահակային ծառայության մեջ գտնվող անձինք․



413—6

թ) Պատերազմի և աշխատանքի հաշմանդամները, վորոնք հարաղրվել են հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

| Յերբ բուն տնտեսության հաշված հարկի գումարն է՝ | Զեղչ է արվում հարկի ⁰/₀-ով | |
|---|---|---|
| | Յեթե տնտես. մեջ կան ուրիշ աշխատունակ անդամներ. | Յեթե տնտես. մեջ չկան ուրիշ աշխատունակ անդամներ. |
| Մինչև 10 ռ. | 100 | 100 |
| 10 ռ. ավելի մինչև 15 » | 75 | 90 |
| 15 » » » 20 » | 50 | 75 |
| 20 » » » 30 » | 35 | 50 |
| 30 » » » 50 » | 25 | 35 |
| 50 » » » 75 » | 15 | 25 |
| 75 » » » 100 » | 5 | 10 |
| 100 » » » . . . | 5 | 5 |

70. Յեթե տնտեսության կազմում կան յերկրային մասերի փոփոխական կազմի զինծառայողներ, վորոնք կանչված են ծառայության առաջին տարվա յեռամսյա վարժեցման կամ վարժական հավաքի կանչման են յենթարկված սեփական շարային ձիերով, ապա այդ ձիերը ազատվում են հարկումից:

71. Այն տնտեսությունները, վորոնց կազմում մտնում են պահեստի զինծառայողները և

զինապարտներ, որոնք չեն թարկված են կանչ-
ման նրանց համար սահմանված վարժու-
թյուններն ու հավաքները անցնելու, հարկի
այն մասի վճարումը, որը պետք է կատարվի
վարժեցման կամ հավաքի ժամանակաշրջա-
նում, հետաձգվում է մեկ ամիս ժամանակով,
հաշվելով այն օրից, երբ այդ անձինք վերա-
դառնում են: Այդ ժամանակի համար տույժ չի
բարդվում:

### ԳԼՈՒԽ 2.

### Ուրիշ հարկերի և տուրքերի արտոնու- թյունները

76. *Պետական յեկամտային հարկի չեն յենթարկվում բավարարության այն բոլոր տեսակները, որ ստանում են զինվորական ծառայողները և պաշտոնյաները բանվորա-դյուղացիական կարմիր բանակի ծառայությունից, նույնպես և այն վարձատրությունը, որ ստանում են ռեզերվում գտնվող զինվորական ծառայողները՝ քաղաքացիական դերատեսչության հիմնարկություններից, ձեռնարկություններից և հաստատություններից:*

77. *Վարժեցման և հավաքների կանչված զինվորական ծառայողների ու պաշտոնյաների նկատմամբ այն դեպքերում, երբ ուսուցման կամ հավաքի ժամանակ լրանում է տեղական յեկամտահարկի վճարման ժամկետը (տարեկան հարկի յենթարկելու դեպքում), հարկի*

վճարումը հետաձգվում է մեկ ամսով՝ նրանց վերադառնալու օրից սկսած: Այդ ժամանակի համար տույժ չի բարդվում:

78. Կարմիր բանակային գաղթականական կոլխոզները (տես 26 հոդ. ծանոթությունը) այն վայրերում, ուր ջրային տուրք է մտցված, կազմակերպվելու օրից սկսած յերկու տարվա ընթացքում՝ ազատվում են այդ տուրքից:

79. Դրոշմատուրքից ազատվում են՝

ա) կադրային շարքային և գլխավորական կազմի (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների կողմից բոլոր գործերի վերաբերյալ՝ կառավարական հիմնարկություններին ու պաշտոնատար անձանց տրված գրավոր դիմումները (հաշվի առնելով նաև դատական հիմնարկություններին տրված դիմումները) և այդ դիմումների պատասխանները.

բ) դատական հիմնարկություններում գործը վարելու համար այդ նույն զինվորական ծառայողների կողմից տրված հավատարմագրերը.

գ) նույն զինվորական ծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին տրվող անտառահատման տոմսերը կամ օրդերները և փայտեղեն բաց թողնելու այլ փաստաթղթերը, նույնպես և անասունների կողմնակի արոտագործման տոմսերը.

դ) սահմանամերձ $7^1/_2$ կիլոմետրային շեր-

ռից ցամաքային սահմաններով Հայրենիք ուղարկվող ծանրոցների իրաղնության համար փոստին ներկայացվող այն հայտարագրերը, որոնք տրվում են մաքսային հիմնարկությունների կողմից այդ նույն ծառայողներին, և զինվորական ծառայողների անունով ծանրոց ուղարկելու դեպքում այդ զինվորական ծառայողների ընտանիքներին տրվող նույնպիսի հայտարագրերը·

յե) Համաձայն այս օրենսգրքի X հատվածի զինվորական փոխադրական փաստաթղթերով կատարվող զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների գույքի (տնային իրերի) յերկաթուղային և ջրային փոխադրությունների փաստաթղթերը:

80· Այս օրենսգրքի X հատվածի համաձայն զինվորական փոխադրական փաստաթղթերով կատարվող յերկաթուղային և ջրային փոխադրությունները ազատվում են տրանսպորտի լուսավորության համար գանձվող նպատակային տուրքից:

81· Այս օրենսգրքի X հատվածի համաձայն զինվորական փոխադրական փաստաթղթերով յերկաթուղով և ջրուղիներով փոխադրվող զինվորական ծառայողների ու նրանց ընտանիքների սեփական գույքը (տնային իրերը) ազատվում է նավահանգստային բեռնային տուրքից և բեռների տեղական տուրքից:

82· Յերկրային զորամասերի կադրային

կազմի և փոփոխական կազմի զինվորական ծառայողները ազատվում են ժառանգության իրավունքի տուրքից:

83. Ժամկետային ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողները ազատվում են դատական հիմնարկություններում գործ վարելու դատական տուրքից ու մնացած այլ տուրքերից:

84. Ժամկետային ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողները ազատվում են նոտարական տուրքից՝

ա) դատական և վարչական հիմնարկություններում գործը վարելու հավատարմագրերի վավերացման, նույնպես և աշխատավարձը ստանալու և դրամական, փոստային ու առաքման թղթակցություններ ստանալու հավատարմագրերի վավերացման.

բ) պետական հիմնարկություններին և հասարակական կազմակերպություններին ներկայացվող պատճենների ու փաստաթղթերի վավերացման համար:

85. Կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողներին (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) ու այդ զինվորական ծառայողների ընտանիքներին պատկանող շինությունները ազատվում են շինությունների հարկից, յեթե նրանցում ապ-

*բում են այդ զինվորական ծառայողները և նրանց ընտանիքները՝ առանց բնակարաններ ու սենյակներ վարձու տալու։*

*Այս արտոնությունը պահպանվում է մինչև այն հարկային տարվա վերջը, երբ մատնանշված զինվորական ծառայողներն արձակվել են երկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ բոլորովին՝ ծառայությունից։*

86. *Ռենտա գանձելուց ազատվում են կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողների (բացի երկարատև արձակուրդ ստացողներից) ու այդ զինվորական ծառայողների ընտանիքների օգտագործման տակ գտնվող՝*

*ա) բնակելի շինություններով բռնված քաղաքային հողամասերը, եթե այդ շինությունները ամբողջովին վարձով չեն տրվում.*

*բ) գյուղատնտեսական օգտագործման քաղաքային հողամասերը, եթե այդ հողամասերը մշակվում են առանց վարձու աշխատանք կիրառելու և չեն ենթարկվում միասնական գյուղատնտեսական հարկի։*

*Այս արտոնությունը պահպանվում է մինչև այն հարկային տարվա վերջը, երբ մատնանշված զինվորական ծառայողները արձակվել են երկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ բոլորովին՝ ծառայությունից։*

87. *Կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողները (բացի*

յերկարատև արձակուրդ ստացողներից) ու այդ զինվորական ծառայողների ընտանիքները ապահովում են արտահերթային միջոցների հաշվից մեկ ձիու՝ յեթե այդ ձին օգտագործվում է բացառապես անձնային տնտեսությունը սպասարկելու նպատակով և մեկ հեծանիվի համար։

88. Կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողները (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) ու այդ զինվորական ծառայողների ընտանիքները քաղաքային բնակավայրերում ապահովում են անասունի հարկից՝ մեկ գլուխ խոշոր և յերեք գլուխ մանր անասունի համար։

89. Կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողները (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) ու այդ զինվորական ծառայողների ընտանիքները ապահովում են փաստաթղթերը ցուցակագրելու տուրքից և բուժական վայրեր ժամանողներից գանձվող տուրքից (կուրորտային տուրք)։

## ՀԱՏՎԱԾ VI

## ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

92. Կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողները, նույնպես և գերակետ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողներն իրավունք

ունեն իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար տեղական խորհուրդների ընդհանուր բնակարանային ֆոնդի բնակելի տարածություն ստանալ բանվորների հետ հավասարապես։

Բացի դրանից կադրային գլխապետական կազմի (բացի կրտսեր կազմից) զինվորական ծառայողներն իրավունք ունեն իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար բնակելի տարածություն ստանալ հատուկ բնակարանային ֆոնդից, որը այդ նպատակով բռնի յի յենթարկվում տեղական խորհուրդների կողմից։

93. Ժամկետավոր ծառայության կադրային շարքային կազմի զինվորական ծառայողները և զինվորական-արտադրական ծառայություն անցնող զինվորական ծառայողները՝ ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում պահպանում են մինչև ծառայության մտնելը ունեցած բնակելի տարածությունը։ Հետագայում, տեղական խորհուրդները դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով այդ տարածությունը օգտագործում են մինչև նրանց ծառայությունից վերադառնալը։

Ծառայությունից վերադառնալուց հետո այդ զինվորական ծառայողներն իրավունք ունեն գրավելու մինչև ծառայության մտնելը իրենց ունեցած բնակելի տարածությունը։ Զինվորական ծառայողների ծառայության

մեջ գտնված ժամանակ՝ այդ տարածության վրա բնակվող անձինք պարտավոր են ազատել այն յերկու շաբաթից վոչ ուշ:

Այս արտոնությունը կարող է օգտագործվել արձակման օրից սկսած վեց ամսվա ընթացքում:

94. Յեթե կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը տեղավորվել է իրենից անջատ ապրող ընտանիքի բնակելի տարածության վրա, ապա նա այդ տան մեջ տարածություն ազատվելու դեպքում իրավունք ունի իր համար բնակելի տարածություն ստանալ նույն տան մյուս բնակվողների հանդեպ՝ առաջին հերթին:

Այդ նույն արտոնությունը վերապահվում է մասնանշված զինվորական ծառայողներին յերկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ ծառայությունից բոլորովին արձակվելու դեպքում այն պայմանով, յեթե նրանք ընտանիքի բնակելի տարածության վրա տեղավորվել են արձակման օրից սկսած վեց ամսվա ընթացքում:

95. Կադրային շարքային և գլխապետական կազմի այն զինվորական ծառայողները, վորոնք արձակվել են յերկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ բոլորովին՝ ծառայությունից և զինվորական-արտադրական ծառայություն անցած զինվորական ծառայող-

ներն իրավունք ունեն տեղական խորհուրդների ընդհանուր բնակարանային ֆոնդից իրենց և իրենց հետ միասին բնակվող ընտանիքի անդամների համար բնակելի տարածություն ստանալ բանվորների հետ հավասարապես:

Այս արտոնությունը կարող է օգտագործվել արձակման օրից սկսած վեց ամսվա ընթացքում:

96. Վարչական կարգով տներից հեռացվելիս, յեթե նման հեռացնելը թույլատրվում է օրենքով, կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողները, գերակետ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողները, զինվորական-արտադրական ծառայություն անցնող զինվորական ծառայողները, նույնպես և այդ զինվորական ծառայողների ընտանիքները ու ժամկետավոր ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողների ընտանիքները օգտվում են հետևյալ արտոնություններից.

ա) Հեռացնող հիմնարկությունը կամ ձեռնարկությունը պարտավոր է հեռացվողներին տրամադրել այնպիսի շինություն, որն իր չափերով համապատասխանի հեռացվողների նախկին շինության՝ տվյալ վայրում սահմանված նորմայից ոչ ավելի, և միաժամանակ բավարարի սանիտարական պահանջներին.

բ) Հեռացնող հիմնարկությունը կամ ձեռնարկությունը պարտավոր ե հեռացվողներին ձրի տրամադրել տեղափոխության համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներ.

գ) Հեռացումը կարող ե կատարվել միմիայն դաշնակից հանրապետությունների օրենսդրությամբ սահմանված տարվա ժամանակում:

97. Յեթե կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը դասընթաց անցնելու համար ուղարկվել ե ռազմա-ուսումնական հաստատություն, կամ գտնվում ե ճամբարում, յերկարատև գործուղման մեջ կամ ստաժ ե անցնում, ապա նա բնակելի տարածությունը պահպանում ե իր ժամանակավոր բացակայության ամբողջ ժամանակի ընթացքում:

Այս հոդվածը չի տարածվում այն զինվորական ծառայողների վրա, վորոնք այդ դեպքում չեն պահպանում իրենց նախկին շտատային պաշտոնները:

98. Կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողները, գերակետ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողները և այդ ծառայողների խնամքին գտնվող ընտանիքի անդամները բնակարանային վարձի տեսակետից

հավասարեցվում են բանվորներին: Այդ դեպքում բնակարանային վարձը հաշվվում է միայն զինվորական ծառայողի հիմնական ռոճիկից:

Ծանոթություն.— *Այս արտոնությունը ռեզերվում գտնվող զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների վերաբերյալ կիրառելու դեպքում, բնակարանային վարձը հաշվվում է այդ զինվորական ծառայողների այն հիմնական ռոճիկից, որը ստանում էին ռեզերվի մեջ հաշվվելուց առաջ Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կադրերում ունեցած ծառայությունից:*

99. *Ժամկետավոր ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողների ընտանիքները, յեթե նրանցում չկան ինքնուրույն մշտական վաստակ ունեցող անձինք, բնակարանային վարձը վճարում են ամսական ամենաքիչ վաստակ ունեցող բանվորների հետ հավասարապես:*

100. *Յեթե կադրային գլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողը դասընթաց անցնելու համար ուղարկվել է ռազմական-ուսումնական հաստատություն, կամ գտնվում է ճամբարում, յերկարատև գործուղման մեջ կամ ստաժ է անցնում, ապա՝*

ինչպես մշտական բնակավայրում, նույնպես և ժամանակավոր ապրելու վայրում՝ այն աներում, որտեղ բնակարանային վարձը գանձվում և տեղական խորհուրդների կողմերով, վճարում և բնակելի տարածության բնակարանային վարձի միայն կեսը:

Այս արտոնությունը վերապահվում է այն պայմանով, յեթե զինվորական ծառայողին ժամանակավոր ապրելու վայրում բնակելի տարածություն չի հատկացված:

101. 9 և ավելի բարձր կատեգորիայի վերագրված կադրային գլխապետական կազմի զինվորական ծառայողները, առանձին զորամասերի հրամանատարները ու կոմիսարները, նույնպես և ռազմա-ուսումնական հաստատությունների հատուկ ռազմական և ռազմա-քաղաքական առարկաների դասատուներն իրավունք ունեն լրացուցիչ սենյակի կամ լրացուցիչ բնակելի տարածության:

## ՀԱՏՎԱԾ VIII

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

110. Կադրային շարքային և գլխապետական կազմի զինվորական ծառայողների (բացի յերկարատև արձակուրդ ստացողներից) ընտանիքի անչափահաս անդամներն ընդունվում են մանկատների, գաղութների, գիշերօթիկ դըպրոցների և նրանց համապատասխանող այլ հիմ

նարկությունների ձրի տեղերը, բանվորների յերեխաների հետ միասնական հիմունքներով:

Ժամկետավոր ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական կազմի զինվորական ծառայողների անմայր մնացած յերեխաները, նույնպես և այդ զինվորական ծառայողների անմայր և անհայր մնացած անչափահաս վորբ յեղբայրներն ու քույրերը՝ յեթե չկան ընտանիքի ուրիշ այնպիսի անդամներ, վորոնք կարողանան նրանց խնամքը իրենց վրա վերցնել, տեղավորվում են մանկատներում, գաղութներում, գիշերօթիկ դպրոցներում և սրանց համապատասխանող այլ հիմնարկություններում՝ բոլոր դեպքերում առաջին հերթին:

111. Գլխապետական կազմի (բացի կրտսեր կազմից) զինվորական ծառայողների ու պաշտոնյաների զավակները, նույնպես և այդ զինվորական ծառայողների ու պաշտոնյաների ընտանիքների այլ անչափահաս անդամները, վորոնք գտնվում են նրանց խնամքին ընդունվում են աշխատանքային դպրոցները, տեխնիկումները, արհեստակցական—տեխնիկական դպրոցները և սրանց համապատասխանող այլ ուսումնական հաստատությունները ու ապահովվում են դասագրքերով և այլ պիտույքներով բանվորների զավակների հետ միասնական հիմունքներով:

Այս նույն արտոնությունը վերապահվում է ժամկետավոր և գերակետ ծառայության կադրային շարքային և կրտսեր գլխապետական

կազմի զինվորական ծառայողների զավակներին և նրանց խնամքին գտնվող ընտանիքի այլ անչափահաս անդամներին:

112. Կադրային ղեկավարական կազմի (բացի ժամկետային ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողների զավակները և գերակետ ծառայության շարքային կազմի զինվորական ծառայողների զավակները ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, ընդունման ընդհանուր կարգով լրացվող տեղերը բանվորների զավակների հետ միասնական հիմունքներով:

113. Կադրային շարքային և ղեկավարական կազմի զինվորական ծառայողները (բացի երկարատև արձակուրդ ստացողներից) ընդունվում են բարձրագույն ուսումնական հաստատությունները, հասակավորների դպրոցներն ու դասընթացները և բանվորական ֆակուլտետները բանվորների հետ միասնական հիմունքներով: Այդ դեպքում բանվորական ֆակուլտետները ընդունվելու համար բանվորագյուղացիական կարմիր բանակի շարքերում գտնվելու ժամանակը հավասարեցվում է ֆիզիկական աշխատանքի ստաժին:

Այս արտոնությունը կարող է օգտագործվել երկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ ծառայությունից բոլորովին արձակվելու ժամանակից մինչև մի տարի լրանալը:

114. Կադրային շարքային և ղեկավա-

տական կազմի (բացի յերկարատև արձակուրդստացողներից) զինվորական ծառայողները, նույնպես և նրանց զավակներն ու ընտանիքի անչափահաս այլ անդամներն ազատվում են ուսումնական հաստատությունների ուսման վարձից:

Այդ զինվորական ծառայողների ընտանիքի չափահաս այն անդամները (բացի զավակներից), վորոնք գտնվում են նրանց խնամքին, ազատվում են ուսումնական հաստատությունների ուսման վարձից այն դեպքում, յերբ զինվորական ծառայողի հիմնական ռոճիկն ամիսը 100 ռուբլուց ավելի չի:

«ԽՍՀՄ Որենք. և կարգ. ժողովածու»
1939 թ. № 23. հոդ. 253

Հ. Ս. Խ. Հ.
ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏ
№ 30—10
2 նոյեմբերի 1931 թ.
ԵՐԵՎԱՆ

ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ

*Ձեր № 003—88|11—31 թ.*

*Բանվորագյուղացիական միլիցիայի օպերատիվ–շարային և վարչատնտեսական կազմի վրա տարածվող գյուղհարկի և Պետապի արտոնությունները նախատեսված են* 1931 *թ.* գյուղատնտեսական հարկի կանոնադրությունով, *որը հաստատված է ՀՍԽՀ Ժողկոմխորհի կողմից* 1931 *թ. ապրիլի* 22*–ին: Այդ կանոնադրությունը և համապատասխան հրահանգները ուղարկված են շրջ. գործկոմներին և գյուղխորհուրդներին և յուրաքանչյուր դեպքում, երբ չի տրվում արտոնությունը, անհրաժեշտ է դիմել անմիջապես շրջֆինբաժնին, որի մասին ձեր գծով պետք է հրահանգեք ձեր տեղական մարմիններին:*

*Կոլլեգիայի անդամ, հարկման սեկտորի վարիչ՝* Գյուլամիրյան

*Պատ–կատարող՝* Գասպարյան

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԳԼԽՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
15 օգոստոսի 1931 թ.
№ 7

ՔԱՂԽՈՐՀՐԴՆԵՐԻՆ, ԳՈՐԾԿՈՄՆԵՐԻՆ,
ՊԱՏՃԵՆ՝ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԼԻՑԻԱՅԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

*Համաձայն Բանվորա-գյուղացիական Միլիցիայի կանոնադրության* 51-*րդ հոդվածի* (*ԽՍՀՄ Օր. Ժող.* 1931 *թ.* 33 *հ.* 247) *տեղական գործադիր կոմիտեները և քաղաքային խորհուրդները ընտանիքավոր միլիցիոներների և միլիցիայի գլխապետական կազմի բնակելի տարածության կարիքը բավարարելու համար, իրենց տրամադրության տակ գտնված նոր շինարարության բնակարանային ֆոնդից պետք է հատկացնեն վոչ պակաս քան* 5 *տոկոսը։*

*Կոմունալ տնտեսության գլխավոր վարչությունն առաջարկում է անշեղ կերպով կիրառել ԽՍՀՄ Ժողկոմխորհի վերոհիշյալ վորոշումը և գործկոմների ու քաղխորհուրդների տրամադրության տակ գտնվող նոր շինարարության բնակարանային ֆոնդի առնվազն* 5 *տոկոսը հատկացնել ընտանիքավոր միլիցիոներներին և միլիցիայի հրամկազմին։*

(Հիմք. *Հանրապետական միլիցիայի Վարչության ս. թ. Օգոստոսի* 7-*ի* №002 *գրությունը*)։

*Կոմտնտվարչության պետ՝* Գառայան

*Տնտեսադետ՝* Ս. Արևշատյան

Հ. Ս Խ. Հ.
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ
ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
№ 021311/03
23 նոյեմբերի—31 թ
Երևան

Պատճենը՝ ԲԴ ՄԻԼԻՑԻԱՅԻ
ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

*Համաձայն բանվորա–գյուղացիական միլիցիայի կանոնադրության 49–րդ հոդ. (ԽՍՀՄ որ. ժող. 1931 թ. №33 հոդ. 247) միլիցիայի օպերատիվ շարային և վարչատնտեսական կազմի ու նրանց ընտանիքի անդամների վրա տարածվում են այն արտոնությունները, վորոնք վերապահված են բանվորա–գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների ու նրանց ընտանիքներին ի թիվս այդպիսիների նաև բնակարանային արտոնությունները։*

*Ի հետեվումն վերոհիշյալի առաջարկվում է՝ բանվորա–գյուղացիական միլիցիայի օպերատիվ–շարային և վարչատնտեսական կազմի ու նրանց ընտանիքի անդամների բնակարանային պայմանները կարգավորելու խնդրում անշեղ ղեկավարվել ԽՍՀՄ ԲԳԿԲ զինվորական ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքի արտոնությունների կոդեքսի* 92–101 *հոդ. հոդ.* (*ԽՍՀՄ Որ. ժող.* 30 *թ.* № 23 *հոդ.* 253) *և* ՀՍԽՀ Կենտգործկոմի 31 բ. սեպտեմբերի 14–ի վորոշմամբ (*արձ.* № 11 *կետ* 10)։

*Կոմտնտժողկոմ*՝ Հ. Ցաղուբյան

*Իրավախորհրդատու*՝ Արմ. Ցեսայան

Հ. Ս. Խ. Հ.
ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
№ 42
20 նոյեմբերի—31 թ.
Երևան

# ԲՈԼՈՐ ՇՐՋՀՈՂԲԱԺԻՆՆԵՐԻՆ

Պատճենը՝ 1. ԿՈԼՏՆՏԿԵՆՏՐՈՆԻՆ
2. ՀԱՅԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
3. ԱՅԳԻՆԿՈՈՊԻՆ
4. ՊԵՏԻԱՆԿԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻՆ
5. ԳԼԽՄԻԼՎԱՐՉՈՒԹՅԱՆ

*Խ.Ս.Հ.Մ. Ժողկոմխորհի* 1931 *թ. մայիսի* 25*-ին հաստատված Բանվորա-գյուղացիական միլիցիայի կանոնադրության* 49*-րդ հոդվածի համաձայն* (*Խ.Ս.Հ.Մ. օր. ժող.* 1931 *թ.* №33 *հ.* 257), *միլիցիայի օպերատիվ շարային և վարչատնտեսական կազմի ու նրանց ընտանիքների անդամների վրա տարածվում են բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար հողօգտագործման ասպարեզում օրենքով նախատեսնված բոլոր արտոնությունները:*

*Ուղարկելով ձեզ բանվորա-գյուղացիական կարմիր բանակի զինվորական ծառայողների արտոնությունների վերաբերյալ հիշյալ օրենքի քաղվածքը,* (*Խ.Ս.Հ.Մ. օր. ժող.* 1930 *թ.* №23 *հ.* 253), *առաջարկվում է ձեզ անշեղ ղեկավարվել սրանով:*

*Հողժողկոմատի տեղակալ՝* Բ. Հարությունյան

*Կազմ-հրահանգչական սեկտ. ղեկավար՝* Դ. Քոչարյան

ՀԱՅԿՈՈՊ

10 սեպտեմբերի — 32 թ.

№ 20—78

Մեխիկոյի դիֆերենցիալ փայավճարների չափը փոքրացնելու համար ընդունել նրանց հիմնական աշխատավարձն առանց նադբավկայի: Այդ դեպքը ե կիրառել կյանքում ի նկատի ունենալով ղեկավար որգանների մի շարք վորոշումները մեխիկոյի արտոնությունների մասին:

Ն. ա. կազմ-հրահանգ. սեկտորի վարիչ՝
Ս. Գրիգորյան

Կազմ. շին. սեկտորի վարիչ՝
Թադեվոսյան

## Հ Ր Ա Մ Ա Ն Գ № 001

## ԶՍԽՀ ԲԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Բոլոր Քաղ. յեվ Շրջմիլ վարչությունների պետերին

1932 թ. հոկտեմբերի 12.

Համաձայն ԲԳ Միլիցիայի վերադաս կենտրոնական մարմնի 1932 թ. մայիսի 20-ի №464 հրամանի՝ ԲԳ Միլիցիայի մարմինների դլխապետական կազմի վրա տարածվում են սկսած 1932 թ. ապրիլի 1-ից՝ առանձնապես հեռավոր վայրերում ծառայության հատուկ արտոնությունները, վորոնք նախատեսված են «ԲԳ Կարմիր բանակի ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների արտոնությունների մասին» կանոնադրության XII հատվածում («ԽՍՀՄ օրենք. և կարգադր. ժողովածու», 1930 թ. № 23, հոդ. 253):

Անդրկովկասյան Խորհրդային Հանրապետությունների Սոցիալիստական Ֆեդերացիան, բացառությամբ Թիֆլիս, Բաքու, Գանձակ, Քութայիս, Բաթում, Սուխում

քաղաքների, դասվում է հեռավոր վայրին, ընդ որում ՀՍԽՀ Ալագյազի, Բասարգեչարի, Գորիսի, Դարալագյազի, Ղափանի, Մարտունու, Մեղրու, Փաշալուի, Սիսիանի, Շամշադինի շրջանները համարվում են առանձնապես հեռավոր վայրեր:

Ի լրումն վերոհիշյալ կանոնադրությամբ նախատեսված հատուկ արտոնությունների՝ ԲԳ Միլիցիայի մարմինների ղեկավարական կազմի վերաբերմամբ պետք է կիրառել նաև հետևյալ արտոնությունները.

1. Հեռավոր վայրերում անընդհատ ծառայության յուրաքանչյուր հինգ տարվա համար տրվում է յերեք ամսվա լրացուցիչ արձակուրդ:

2. Երբ բացառիկ դեպքերում հնարավոր չի լինում օգտվել բնական ձևով այդ լրացուցիչ արձակուրդով, այն ժամանակ տրվում է դրամական փոխհատուցում (կոմպենսացիա) չօգտագործված արձակուրդի տևողության հաշվով վոչ վաղ քան մեկ տարի անցնելուց հետո 5-ամյա ծառայությանը լրացրած տարիներից:

3. Հեռավոր վայրերի համար նախատեսված բոլոր տեսակ արտոնությունների հատուցումը կատարվում է, հաշվելով միայն լրիվ ու հիմնական ռոճիկն, առանց հաշվարկելու ծառայության տարիների համար տրվող հավելումները:

Աղբյուր. «ԲԳ Կարմիր Բանակի ծառայողների և զինապարտների ու նրանց ընտանիքների արտոնությունների կանոնադրության» XII հատվածը:

ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավոր Վարչության Պետ՝ Ա. Դուլգարյան

Կազմակերպչության Պետ՝ Գ. Հախումյան

## ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ՈՒ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք)

«ԽՍՀՄ Օր. յեվ կարգ. ժողով.» 1930 թ. № 23, հոդ. 253.

### ՀԱՏՎԱԾ XII

### *ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՎՈՐ ՎԱՅՐԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

146. *Այն հեռավոր վայրերի ցանկը, վորտեղի ծառայությունը իրավունք ե տալիս հատուկ արտոնությունների, սահմանում ե Ռազմական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատը՝ համաձայնության գալով Միացյալ Պետական Քաղաքական Վարչության և ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատի հետ։*

147. *Ուրիշ պաշտոնի նշանակվող կամ փոխադրվող կադրային գլխապետական կազմի (բացի կրտսեր կազմից) զինվորական ծառայողները ստանում են կրկնակի չափով որա-*

ղրամ և կրկնակի չափով փոխադրության
ղրամ և կրկնակի չափով փոխադրության
ուղիղ յերեք ամսվա ընթացքում կրկնակի ռոճիկ (հիմնական և լրացուցիչ ռոճիկների կրկնակին)՝ յեթե նշանակումը կամ փոխադրությունը կապված է վոչ հեռավոր վայրից հեռավոր վայրը կամ հեռավոր վայրի սահմաններում յերկաթուղով 1000 կիլոմետրից ավելի կամ հաղորդակցության այլ ճանապարհներով 500 կիլոմետրից ավելի տարածություն անցնելու հետ:

Միևնույն պայմաններում նույն արտոնություններից օգտվում են ծառայության ընդունվող կամ գերակետ ծառայության մեջ գտնվող և այլ զորամասեր փոխադրվող կադրային շարքային ու գլխապետական կազմի զինվորական ծառայողները:

Յեթե այլ պաշտոնի նշանակվելը, փոխադրությունը կամ գերակետ ծառայության ընդունվելը կապված է վոչ հեռավոր վայրից հեռավոր վայրը ավելի փոքր տարածության անցնելու հետ, ապա վերը մատնանշված զինվորական ծառայողները ստանում են միայն կրկնակի ռոճիկ՝ նոր տեղի ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում:

Ծանոթություն 1. Այն տարածությունները, վորոնց դեպքում Միացյալ Պետական Քաղաքական Վարչության զորքի զինվորական ծառայողներն. իրավունք ունեն այս հոդվածում մատնանշված ար-

տանությունների, վորոշում է Միացյալ Պետական Քաղաքական Վարչությունը:

Ծանոթություն 2. Ռեզերվում գտնը-վող գլխապետական կազմի զինվորական ծառայողները նոր տեղի ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում համա-պատասխան հիմնարկություններից, ձեռ-նարկություններից ու հաստատություն-ների տված վարձատրությունից բացի, նրանցից նաև ստանում են այդ զինվորա-կան ծառայողների ռեզերվում հաշվելուց առաջ բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կարգերում վարած ծառայու-թյան հիմնական և լրացուցիչ ռոճիկները:

148. Հեռավոր վայրերում ծառայության գտնվող կադրային շարքային և կրտսեր գլխա-պետական կազմի զինվորական ծառայողները, յեթե նրանք ժամկետավոր ծառայությունը վերջացնելուց հետո մնում են հեռավոր վայ-րերի գերակետ ծառայության մեջ, գերակետ ծառայության առաջին յերեք ամսվա ընթաց-քում ստանում են կրկնակի ռոճիկ:

Նույն արտոնությունից օգտվում են կադ-րային շարքային և կրտսեր գլխապետական կազմի այն զինվորական ծառայողները, վո-րոնք հեռավոր վայրերում գերակետ ծառայու-թյան ընդունվում են ժամկետավոր ծառայու-թյունից արձակվելու որից սկսած վեց ամսվա ընթացքում:

149. Կադրային շարքային և կրտսեր գըլխավորական կազմի զինվորական ծառայողները, որոնք հեռավոր վայրերում ժամկետավոր ծառայությունը վերջացնելուց հետո այդ վայրերում նշանակվում են միջին կադրային գլխավորական կազմի պաշտոններին, կրկնակի ռոճիկ են ստանում միջին գլխավորական կազմի պաշտոնների ծառայության առաջին յերեք ամսվա ընթացքում:

150. Այն զինվորական ծառայողները, որոնք հեռավոր վայրերում ծառայել են մեկ տարուց պակաս, պարտավոր են վերադարձնել իրենց ստացած տեղափոխության կրկնակի նըպաստի մասը, ուղևորման ժամանակի որադըրամի կրկնակի մասը և ռոճիկի կրկնակի մասը, յեթե նրանք սեփական ցանկությամբ նշանակվում են այլ պաշտոնի կամ փոխադրվում են վոչ հեռավոր վայրեր կամ արձակվում են յերկարատև արձակուրդի, պահեստի մեջ կամ բոլորովին ծառայությունից:

151. Հեռավոր վայրերում ծառայության գտնվող կադրային գլխավորական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) զինվորական ծառայողներին տրվում է միանվագ լրացուցիչ վարձատրություն՝

ա) հեռավոր վայրերում առանց ընդհատման ծառայության յուրաքանչյուր տարվա համար՝ մեկ ամսվա ռոճիկի չափով:

բ) հեռավոր վայրերում առանց ընդհատ-

ման ծառայության յուրաքանչյուր յերեք տարվա համար՝ յերկու ամսվա ռոճիկի չափով (անկախ «ա» կ. նախատեսնված վճարումից):

Վարձատրությունը հաշվվում է ըստ տալու նախընթաց ամսվա հիմնական լրացուցիչ ռոճիկի:

Ծանոթություն.— Ուղերկված գտնվող դիվանագիտական կազմի զինվորական ծառայողներին լրացուցիչ վարձատրություն տալիս են համապատասխան հիմնարկությունները, հաստատությունները ու ձեռնարկությունները, այդ զինվորական ծառայողների ուղերկվում հաշվելուց առաջ բանվորա–գյուղացիական կարմիր բանակի կազմերում վարած ծառայության հիմնական և լրացուցիչ ռոճիկի հաշվով:

152. Կազմային դիվանագիտական կազմի (բացի ժամկետավոր ծառայության դիվանագիտական կազմից) և գերակետ ծառայության շարքային կազմի այն զինվորական ծառայողները, վորոնք հեռավոր վայրերում ծառայել են վեց տարի անհընդատ, իսկ ծառայության բացառիկ ծանր պայմաններ ունեցող վայրերում՝ չորս տարի անընդհատ*), իրավունք ունեն ըստ իրենց ընտրության փոխադրվել այլ

---

*) Ծառայության բացառիկ ծանր պայմաններ ունեցող վայրեր չեն նախատեսնված Խորհրդային Հայաստանի տերիտորիայում:

ռազմական շրջաններ, ստանալով կրկնակի չափով օրադրամ և փոխադրության դրամ։

153. Վոչ հեռավոր վայրերում գտնվող ռազմա-ուսումնական հաստատություններում դասընթաց անցնելու համար հեռավոր վայրերից ուղարկվող զինվորական ծառայողների նկատմամբ այդ ռազմա-ուսումնական հաստատություններում գտնվելու ժամանակամիջոցը չի հաշվվում միանվագ լրացուցիչ վարձատրություն (151 հոդ.) և փոխադրության իրավունք (152 հոդ.) ստանալու համար հեռավոր վայրերի յերկարամյա ծառայության ժամանակամիջոցի մեջ։

154. Միանվագ լրացուցիչ վարձատրություն (151 հոդ.) և փոխադրության իրավունք (152 հոդ.) ստանալու համար հեռավոր վայրերի յերկարամյա ծառայության ժամանակամիջոցի մեջ հաշվվում ե այն վայրերում 1923 թ. հունվարի 1-ից հետո կադրային գըլխապետական կազմի (բացի ժամկետավոր ծառայության կրտսեր կազմից) պաշտոնով վարած ծառայությունը, վորոնք մինչ այս օրենսդիրքը կիրարկության դնելը վերագրվել են հեռավոր վայրերին։

155. Հեռավոր վայրերի ծառայության հատուկ արտոնությունները չեն տարածվում այն զինվորական ծառայողների վրա, վորոնք նախ քան այդ արտոնությունների իրավունք տվող ծառայության պաշտոններ վարելը, յե-

րեք տարուց ավելի բնակվել են տվյալ ադմի-նիստրատիվ շրջանում: Եթե նախընթաց բնակման և տվյալ շրջանի ծառայության մեջև մի տարուց ավելի ընդմիջում է չեղել, ապա արտոնությունների իրավունքը պահպանվում է: Բանվորա-գյուղացիական կարմիր բանակի կադրերում ժամկետային ծառայության գտնվելը չի հաշվվում տվյալ շրջանում բնակվելու ժամանակի մեջ:

ԽՍՀ Միության ԿԳԿ նախագահ՝
Մ. Կալինին

ԽՍՀ Միության ԺԿԽ Նախագահի Տեղակալ՝ Վ. Շմիդտ

ԽՍՀ Միության ԿԳԿ Քարտուղար՝
Ա. Ենուքիձե

Մոսկվա— Կրեմլ.
1930 թ. ապրիլի 23:

## ՀՐԱՄԱՆ

## ՀՍԽՀ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

20 հուլիսի 1932 թ.

*Հայտարարվում է ի գիտություն և ի ղեկավարություն Խ.Ս.Հ.Մ. Գերագույն Դատարանի պլենումի բացատրությունը Բ.Գ. Միլիցիայի աշխատակիցների արտոնությունների մասին տրանսպորտի տներից, դպրոցական շենքերից և զինվորական գերատեսչության շենքերից վտարելու դեպքերում։*

*ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի գլխ. վարչության պետ՝* Դուլգարյան

---

**ԽՍՀՄ Գերագույն դատարանի XXXVII պլենումի բացատրությունը միլիցիայի օպերատիվ շարքային յեվ վարչա-տնտեսական կազմի աշխատակիցների վտարման մասին տրանսպորտի տներից, դպրոցական շենքերից յեվ զինվորական գերատեսչության շենքերից**

Միութենական հանրապետությունների Գերագույն Դատարաններին

*26 մայիսի 1932 թ.*

*«Ի նկատի առնելով տեղի ունեցող դեպքերը, յերբ անտեսվում են միլիցիայի աշխա-*

տակիցների վերաբերմամբ բնակարաններից վարչական կարգով վտարելու ժամանակ նրանց իրավունքները արտոնությունների մասին, որոնք սահմանված են «Զինվորական ծառայողների արտոնությունների օրենսգրքի» 96-րդ հոդվածով, Խ.Ս.Հ.Մ. Գերագույն Դատարանի Պլենումը բացատրում է.

Համաձայն Բ.Գ. Միլիցիայի կանոնադրության 49-րդ հոդվածի (Օրենք. ժող. 1931 թ. № 33 հոդ. 247), միլիցիայի օպերատիվ-շարքային և վարչա-տնտեսական կազմի աշխատակիցները բնակարանային և այլ մի քանի արտոնությունների նկատմամբ հավասարեցված են զինվորական ծառայողներին:

Ուստի այն բոլոր դեպքերում, երբ օրենքը նախատեսում է բնակարաններից վարչական կարգով վտարելու կիրարկման արտոնություններ զինվորական ծառայողների համար, Բ.Գ. Միլիցիայի օպերատիվ-շարքային և վարչա-տնտեսական կազմի աշխատակիցներն էլ պետք է օգտվեն այդ արտոնություններից զինվորական ծառայողների հետ համահավասար հիմունքներով: Զինվորական ծառայողների համար արտոնությունները սահմանված են զինվորական ծառայողների վերաբերյալ արտոնությունների մասին օրենսգրքի 96-րդ հոդվածում և կայանում են նրանում, որ բնակարանից վտարող հիմնարկը պարտավոր է վարչական կարգով վտարողին տալ համապատասխան տարածություն, բայց ոչ ավելի

տեղական նորմերից, բնակելի շենք և տրանսպորտային միջոցներ, նաև արգելվում է վարձական վաստակը կատարել միութենական հանրապետությունների օրենսդրությամբ տարբեր չսահմանված ժամանակին»:

*Խ.Ս.Հ.Մ. Գերագույն դատարանի նախագահ՝* Ա. Վինոկուրով

*Քարտուղար՝* Տամանսկի

## ՔԳ ՄԻԼԻՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## (ՔԱՂՎԱԾՔՆԵՐ)

### I. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

### Ա. Կոլեկտիվ տնտեսություններին տրվող արտոնությունները

*Հոդվ. 23. Մասնակի չափով ազատվում են ապահովագրական վճարումներից այն կոլեկտիվ տնտեսությունները, վորոնց կազմի մեջ կան՝*

*Միլիցիայի վարչա–տնտեսական ու ադմինիստրատիվ շարքային կազմի մեջ ծառայող անձինք (կետ «ը»):*

*Զորամասայնացված պահակություն և զորամասայնացված հրշեջ խմբերում ծառայող անձինք (կետ «թ»):*

*Կուլակների դեմ կռիվներ ունենալու հետևանքով սպանված անձինք (կետ «ժ»):*

*Հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբակներին պատկանող պատերազմի ու աշխատանքի հաշմանդամներ (կետ «ի»):*

*Հիշյալ կոլտնտեսություններին զիջվում*

և ապահովագրական վճարի այն մասը, վորն ընկնում է նշված քաղաքացիների վրա:

### Բ. Աշխատավորական մենատնտես և կոլտնտեսականների տնտեսություններին տրվող արտոնությունները

*Հոդ. 25. Ապահովագրական վճարումների վոչ պակաս քան մեկ յերրորդ մասից ազատվում են այն կոլտնտեսականներն ու մենատընտեսները, յեթե տնտեսության կազմի մեջ մտնում են՝*

*Այն անձինք, վորոնք թված են վերոհիշյալ 23-րդ հոդվածի ը,թ,ժ,ի կետերում:*

(Վորոշում *ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների խորհրդի*, 1932 *թ. հուլիսի* 2-*ի՝ «Գյուղական վայրերում և քաղաքներում* 1933 *թ. պարտադիր կոպարային ապահովագրության անցկացնելու մասին»*):

### II. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿ

Արտոնություններ կոլտնտեսություններին, վորոնց կազմի մեջ մտնում են զինվորական ծառայողներ, շքանշաններով պարգևատրված անձինք, աշխատանքի հերոսներ, ռազմականացված պահակախմբերի և միլիցիայի աշխատողներ, ինչպես նաև կուլակային յելույթներից տուժողներ և այլն:

*Հոդվ. 16. Կոլտնտեսության հարկը հաշվելու ժամանակ հարկվող յեկամտից հանվում*

և յեկամուտի այն մասը, որը բաժին է ընկնում կոլտնտեսության կազմի մեջ գտնվող հետևյալ անձանց.

Միլիցիայի վարչա-տնտեսական և օպերատիվ շարքային կազմին պատկանող անձանց (կետ «բ»):

Ռազմականացված պահակներում ծառայող անձանց (կետ «թ»):

Հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբակներին պատկանող պատերազմի ու աշխատանքի հաշմանդամներին (կետ «ժ»):

Նախկինների կազմից ազատված դյադակյան ակտիվիստներին: (կետ «ի»):

Հոդվ. 59. Ստորև բերված ցուցակի մեջ մատնանշված արտոնությունները տրվում են այն տնտեսություններին, որոնց կազմի մեջ մտնում են—

գ) Նախկին կարմիր գվարդիականները և կարմիր պարտիզանները.

բ) Միլիցիայի օպերատիվ շարքային և վարչատնտեսական կազմին պատկանող անձինք.

թ) Ռազմականացված պահակներում աշխատող անձինք.

ժ) Հաշմանդամության առաջին, յերկրորդ և յերրորդ խմբերին պատկանող պատերազմի և աշխատանքի հաշմանդամները:

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

| Տնտեսութ. համար սահմանված հարկի գումարը | Զեղչ է տրվում հարկի տոկոսներով | |
|---|---|---|
| | Յեթե տնտեսութ. մեջ կան այլ աշխատունակ տղամարդիկ | Յեթե տնտեսութ. մեջ չկան այլ աշխատունակ տղամարդիկ |
| Մինչև 10 ռ. | 100 | 100 |
| 10 ռ. ավելի մինչև 15 » | 75 | 90 |
| 15 » » » 20 » | 50 | 75 |
| 20 » » » 30 » | 35 | 50 |
| 30 » » » 50 » | 25 | 35 |
| 50 » » » 75 » | 15 | 25 |
| 75 » » » 100 » | 5 | 10 |
| 100 » բարձր » . . . | 5 | 5 |

(«Կանոնադրություն 1932 թ. գյուղատնտեսական հարկի»—հաստատված է ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1932 թ. մայիսի 23-ին)։

### III. ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԱՀԱՐԿՈՒՄԸ 1932 թ.

Ինքնահարկումից ըստ օրենքի բոլորովին ազատվում են՝ գյուղական վայրերում բնակվող և գյուղատնտեսություն չունեցող կադրային ու շարքային հրամկազմի զինվորականները, բացի յերկարատև արձակուրդում գտնվողներից, ինչպես և բանվորա-գյուղացիական միլիցիայում և ռազմականացված պահակնե-

բում չարային աշխատանք տանող անձինք (կետ «դ»)։

ԽՍՀՄ կամ դաշնակից հանրապետությունների մեկ կամ մի քանի շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսները (կետ «դ»).

Պատերազմի հաշմանդամները (կետ «ե»).

Պետական մարմիններից կամ հասարակական կազմակերպություններից կենսաթոշակ ստացող այն անձինք, վորոնք չունեն ուրիշ յեկամուտներ (գյուղատնտեսությունից, վարձու աշխատանքից և այլն) կետ «զ»).

Հաշմանդամություն ստացած, յերկրորդ և յերրորդ խմբակներին պատկանող աշխատանքի հաշմանդամները (կետ «է»)։

(«Գյուղի բնակչության ինքնահարկման 1932 թվին»—գործնական ձեռնարկ. Հրատ. ՀՍԽՀ Ֆինժողկոմատի 1932 թ. Յերևան, եջ 13—14).

## IV. ԳՅՈՒՂԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ՏՈՒՐՔ

Հոդ. 3. Տուրք վճարելուց ազատվում են.

Կադրային, շարային և հրամկազմին պատկանող զինվորականները, բացի յերկարատև արձակուրդում գտնվողներից, պահեստում (ռեզերվում) գտնվող զինվորականները, բանվորա-գյուղացիական միլիցիայի և ռազմակա-

նացված պահպանությունների կազմի մեջ գտնվող շարային անձինք (կետ «բ»).

ԽՍՀ Միության մեկ կամ մի քանի շքանշաններով կամ պատվավոր հեղափոխական զենքով պարգևատրված անձինք և աշխատանքի հերոսները (կետ «գ»).

Պատերազմի հաշմանդամները (կետ «դ»).

Պետական մարմիններից կամ հասարակական կազմակերպություններից կենսաթոշակ ստացող թոշակառուները, վորոնք ուրիշ յեկամուտ չունեն:

(Վորոշում ՀՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՝ 1932 թ.

«Գյուղի տնտեսական և կուլտուրական շինարարության կարիքների համար տուրք սահմանելու մասին», տես Հրահանգ Ֆինժողկոմատի 1932 թ. փետրվարի 1-ի):

## V. ՅԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ

Յեկամտային հարկից ազատվում են ԲԳ Միլիցիայի և կալանատեղերի վարչա-տնտեսական ու շարային կազմի անձինք, նմանապես քրեա-հետախուզական հիմնարկների . անկախ կազմը:

Ծանոթություն: Վերոհիշյալ անձերի կողմնակի յեկամուտները (շենքերից, հողամասերից և այլ աղբյուրներից, բացի աշխատավարձից) յեկամտային հարկից չեն ազատվում:

(Կանոնադրություն մասնավոր անձերից գանձվող պետական յեկամտային հարկի մասին. 1930 թ. սեպտեմբերի 2-ի).

## VI. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՒԼՏ-ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐԿ

Քաղաքային կուլտ-բնակարանային հարկից ազատվում են նաև վերահիշյալ անձինք:

(Կանոնադրություն քաղաքային կուլտ-բնակարանային տուրքի մասին 1932 թ. հունվարի 17-ի. հոդ. 3, նաև Հրահանգ այդ մասին § 11 և 13).

## VII. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ

Պետական տուրքից ազատվում են վերոհիշյալ բոլոր անձերի և նրանց ընտանիքների անդամների կողմից ներկայացվող գրավոր հայտարարությունները ու դիմումները:

(Պետական տուրքի մասին 1930 թ. սեպտեմբերի 2-ի կանոնադրության հրահանգը).

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ №011

### ՄԻԼԳԼԽՎԱՐՉՈՒԹՅԱՆ 20 ՓԵՏՐՎԱՐԻ 1932 Թ.

### ԲՈԼՈՐ ՔԱՂ. ԵՎ ՇՐՋՄԻԼՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

*Հայտնում ենք՝ որ միլիցիայի կազմին պատկանող անձնավորությունները և նրանց ընտանիքների անդամները վարչական կարգով վտարման խնդրում օգտվում են նույն արտոնություններով, որոնք նախատեսված են Վարչության* 1932 *թ. հունվարի* 7-*ի* № 011 *շրջաբերականում:*

Հիմք. *Գերագույն դատարանի ս/թ. փետրվարի* 15/19 №18 *շրջաբերականը՝ ուղղված նրանց կողմից բոլոր ժողդատարաններին:*

*Միլգլխվարչության պետ՝* Դուլգարյան

*Գործերի վարիչ՝* Ավետիքյան

# ԲՈԼՈՐ ՔԱՂ. ՑԵՎ. ՇՐՋ. ՄԻԼՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

*Այսու հայտնվում է Ձեզ ի գիտություն և ի ղեկավարություն Հ. Ս. Խ. Հ. Գերագույն դատարանի 1932 թ. հունվարի 7-ի № 4 շրջաբերականի բացատրությունը, վորը ուղարկված է բոլոր Ժողդատարաններին, Շրջդատարաններին, Քաղդատախազներին, Դատապաշտպանների կոլեկտիվին:*

*ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի և տնտեսական խորհրդակցության 1931 թ. Սեպտեմբերի 17-ի «Պաշտպանական և Ծովային Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի մարմիններին պատկանող անձերից, Բանվորագյուղացիական Կարմիր բանակի շարքերում չգտնվող անձանց վարարելու մասին» (ԽՍՀՄ Օրենքների և կարգադրությունների ժողովածու 1931 թ. № 53, հոդ. 342) վորոշումը գործնականացնելու նպատակով, Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդն առաջարկում է ՀՍԽՀ բոլոր Քաղխորհուրդներին և Շրջգործկոմներին, հիշյալ վորոշումը կիրառելիս, ղեկավարվել հետևյալ սկզբունքներով:*

1. *Միութենական օրենքի համաձայն Պաշ–*

մակյան և Ծովային գործերի ժողովրդական Կոմիսարիատի մարմինները իրավունք ունեն իրենց պատկանող անտառից տարվա բոլոր ժամանակներին վարչական կարգով վտարել բոլոր այն անձանց, վորոնք չեն գտնվում բանվորա-գյուղացիական կարմիր բանակում. վտարման այդ իրավունքը տարածվում է ռազմական գերատեսչության հատկացված բոլոր անտառի վրա՝ անկախ նրանից, թե ինչ հիմունքներով են այդ անտառը գտնվում Ռազմական և Ծովային գործերի ժողովրդական Կոմիսարիատի տրամադրության տակ (ազգայնացում, ամրացում, կառուցման իրավունք, վարձակալություն):

2. Վտարվող բանվորներին, ծառայողներին և աշխատավորների այլ կատեգորիաներին քաղխորհուրդները ու շրջգործկոմները տրամադրում են սանիտարական տեսակետից բնակության համար պիտանի տարածություն՝ վտարելու պահին վտարվողի ունեցած բնակելի տարածությունից վոչ պակաս չափով:

Յեթե վտարվողը պատկանում է Հրամկազմին և գտնվում է յերկարատև արձակուրդում կամ Բ.Գ. Կարմիր բանակի պահեստում, կամ թե ռազմական գերատեսչության թոշակառու է, ապա նրան բնակելի տարածություն է տրամադրվում առաջին հերթին:

3. Աշխատավորները վտարվում են նրանց վտարելու մասին հայտարարություն տալու

պահից յերկու ամսվա ժամանակամիջոցը լրանալուց հետո, անկախ այն հանգամանքից, թե քաղխորհուրդը կամ շրջգործկոմը հիշյալ ժամանակամիջոցում վարձակալին տրամադրում է բնակելի տարածություն թե ոչ:

Յեթե վճարողը պատկանում է անաշխատ կատեգորիային, ապա վճարումն ի կատար է ածվում վճարելու մասին հայտարարելուց մինչ 7 օրվա ընթացքում, առանց բնակելի տարածության տրամադրելու:

4. Բնակարաններից վարչական կարգով վճարման ենթակա չեն նաև Բ.Գ.Կ.Բ. կադրային հրամկազմին պատկանող անձինք, վորոնք փոխադրված լինելով այլ վայր, ծառայության նոր տեղում բնակելի տարածություն ստանալուց որից մեկ ամսվա ընթացքում չեն ազատում իրենց կողմից բռնած տարածությունը ռազմական գերատեսչության պատկանող տներում (հոդ. 1): Հիշյալ անձինք վճարվում են առանց բնակելի տարածության հատկացնելու:

5. Այս հրահանգում նախատեսված անձանց վճարումն ի կատար են ածում միլիցիայի մարմինները այն ցուցակներով, վոր կայազորի պետերը ներկայացնում են քաղխորհրդին և շրջգործկոմներին:

6. Յեթե Բ.Գ. Կարմիր բանակի կադրային հրամկազմին պատկանող նաև նրանց հետ ապրող անձանց այլ վայր տեղափոխելու հետե-

վանքով քաղաքայնացված Փոնդի տներում բնակելի տարածություն է ազատվում, այս քաղխորհուրդներն ու շրջգործկոմները պարտավոր են ամբողջ բնակելի տարածությունը հանձնել կայազորի պետերի ցուցմունքներով:

7. Քաղխորհուրդներն ու շրջգործկոմները պարտավոր են այս հրահանգում սահմանված կարգով յերեք ամսվա ընթացքում ռազմական գերատեսչության պատկանող տներից վտարել այն անձանց, վորոնք այդ միջոցին Բ.Գ. Կարմիր բանակում չեն գտնվում:

8. Այս հրահանգի հրատարակությամբ վերացվում են բոլոր այն վորոշումները, վորոնք վերաբերվում են ռազմական գերատեսչության պատկանող տներից բնակվող անձանց վտարելուն:

9. Պարտավորացնել Հանրապետության Դատախազին հսկել այս հրահանգի կիրառման վրա:

Հայտնելով վերոհիշյալ շրջաբերականի բովանդակությունը, Միլիցիայի Գլխավոր Վարչությունն անհրաժեշտ է համարում պարզաբանել բոլոր Քաղ. և Շրջ. Միլպետներին, վոր 5-րդ կետը ճիշտ կատարելու համար պետք է լավ ըմբռնել շրջաբերականի ամբողջ իմաստը:

Միլիցիայի գլխ. վարչության պետի տեղակալ՝ Խաչատրյան

Գործերի վարիչ՝ Ավետիքյան

ադուհեց յերկու ամսվա ժամանակամիջոցը լրանալուց հետո, անկախ այն հանգամանքից, թե քաղխորհուրդը կամ շրջգործկոմը հիշյալ ժամանակամիջոցում վճարողին արձանագրում և բնակելի տարածություն թե վոչ:

Յեթե վարձավճարողը պատկանում է անաշխատ կատեգորիային, ապա վճարումն ի կատար և ածվում վճարելու մասին հայտարարելուց մոտ 7 օրվա ընթացքում, առանց բնակելի տարածության արձանագրելու:

4. Բնակարաններից վարչական կարգով վճարման յենթակա չեն նաև Բ.Գ.Կ.Բ. կադրային հրամկազմին պատկանող անձինք, վորոնք փոխադրված լինելով այլ վայր, ծառայության նոր տեղում բնակելի տարածություն ստանալու օրից մեկ ամսվա ընթացքում չեն ազատում իրանց կողմից բռնած տարածությունը ռազմական գերատեսչության պատկանող տներում (Հոդ. 1): Հիշյալ անձինք վճարվում են առանց բնակելի տարածության հատկացնելու:

5. Այս հրահանգում նախատեսված անձանց վճարումն ի կատար են ածում միլիցիայի մարմինները այն ցուցակներով, վոր կայազորի պետերը ներկայացնում են քաղխորհրդին և շրջգործկոմներին:

6. Յեթե Բ.Գ. կարմիր բանակի կադրային հրամկազմին պատկանող նաև նրանց հետ ապրող անձանց այլ վայր տեղափոխելու հետե-

վանքով քաղաքացիացված Փոնդի տներում բնակելի տարածություն է ազատվում, այս քաղխորհուրդներն ու շրջգործկոմները պարտավոր են ամբողջ բնակելի տարածությունը հանձնել կայազորի պետերի ցուցմունքներով:

7. Քաղխորհուրդներն ու շրջգործկոմները պարտավոր են այս հրահանգում սահմանված կարգով յերեք ամսվա ընթացքում ռազմական դերատեսչության պատկանող տներից վտարել այն անձանց, վորոնք այդ միջոցին Բ.Գ. Կարմիր բանակում չեն գտնվում:

8. Այս հրահանգի հրատարակությամբ վերացվում են բոլոր այն վորոշումները, վորոնք վերաբերվում են ռազմական դերատեսչության պատկանող տներից բնակվող անձանց վտարելուն:

9. Պարտավորացնել Հանրապետության Դատախազին հսկել այս հրահանգի կիրառման վրա:

Հայտնելով վերոհիշյալ շրջաբերականի բովանդակությունը, Միլիցիայի Գլխավոր Վարչությունն անհրաժեշտ է համարում պարզաբանել բոլոր Քաղ. և Շրջ. Միլպետներին, վոր 5-րդ կետը ճիշտ կատարելու համար պետք է լավ ըմբռնել շրջաբերականի ամբողջ իմաստը:

Միլիցիայի գլխ. վարչության պետի տեղակալ՝ Խաչատրյան

Գործերի վարիչ՝ Ավետիքյան

№ 001/7
4 հունվարի—32 թ.

ԲՈԼՈՐ ՔԱՂ. ՅԵՎ ՇՐՋՄԻԼ.
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐԻՆ

*Այստեղ ուղարկվում է Ձեզ ի գիտություն ԽՍՀՄ. Ժ.Կ.Խ-ի 1932 թ. 2-ր Դեկտեմբերի վորոշման պատճեն «Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Շարքային կազմի պետական ապահովության մասին»:*

(ԽՍՀՄ. Որ. Ժող. 1932 թ. № 80. Հոդ. 490.):

*Իտ. Միլ-միլխավարչության տեղակալ՝* Խաչատրյան
*Կազմտեսչության պետ՝* Հախումյան

Վ.Գ.40.
4-1-32 թ.

## ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

## ՎՈՐՈՇՈՒՄ

### Բանվորա-գյուղացիական միլիցիայի շարքային կազմի պետական ապահովության մասին:

*Խ.Ս.Հ. Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը վորոշում է՝*

1. *Բանվորա-գյուղացիական միլիցիայի շարքային կազմի աշխատավորների և նրանց ընտանիքների համար* 1933 *թ. հունվարի* 1*-ից սահմանել պետական ապահովություն՝ բանվորա-գյուղացիական կարմիր բանակի գերակետ ծառայության կազմի շարքային անձնավորություններին և նրանց ընտանիքներին հավասար:*

2. *Ներկա վորոշման* 1*-ին հոդվածի համապատասխան բանվորա-գյուղացիական միլիցիայի կանոնադրքի մեջ* (*ԽՍՀՄ Ո.Ժ.* 1931 *թ.* № 33, *հոդ.* 247), *մտցնել հետևյալ փոփոխությունները՝*

*ա). Կանոնադրքի* 46*-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝*

«46. *Բանվորա-գյուղացիական միլիցիայի գլխապետական և շարքային կազմի աշխատավորները և նրանց ընտանիքները ոգտվում*

են պետական ապահովությամբ՝ Բանվո-րա-գյուղացիական կարմիր բանակի միջին, ավագ և բարձր զինվորական կազմի անձնա-վորությունների և նրանց ընտանիքների համար:

Բանվորա-գյուղացիական կարմիր բա-նակի զինվորական և շարքային կազմի անձ-նավորությունների պետական ապահովու-թյան կարգով կենսաթոշակներ և նպաստներ նշանակելու կանոնները, որ հանձնված է Ռազ-մական և Ծովային Ժողովրդական Կոմիսարիա-տին, միլիցիայի աշխատավորների և նրանց ընտանիքների նկատմամբ կիրառում են դաշ-նակից հանրապետությունների Միլիցիայի Գլխավոր Վարչությունների պետերը»:

բ) Կանոնադրի 47 և 48 հոդվածնե-րը վերացնել:

ԽՍՀ Միության Ժ·Կ·Խ· Նախագահի Տե-ղակալ՝ Ա· Ռուձուտակ

Խ·Ս·Հ·Մ· Ժ·Կ·Խ-ի Գործերի կառավարչի տեղակալ՝ Ի· Միրոշնիկով

(ԽՍՀՄ Որ· Ժող· 1932 Թ· № 80, հոդ· 490)

Մոսկվա, Կրեմլ,

1932 Թ· Դեկտեմբ· 2·

№1779·

# ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

## (ԹՎԱՆՇԱՆՆԵՐԸ ՑՈՒՑԱԴՐՎԱԾ ԵՆ ԸՍՏ ԷՋԵՐԻ)

### Ա.

*Անփոխանցանկ պաշտոնների* 45, 46.
*Աղյուսակներ. կենսաթոշակների կոպարների* 19, 21, 27, 28, 30, 31. *Հարկային արտոնությունների* 66, 103.
*Աշխատանքային հերոս* 17, 64, 101, 104, 105.
*Աշխատունակության կորուստ* 4, 5, 22, 24, 35.
*Ապահովագրում* 3, 4—5, 100.
*Ապահովագրություն սոցիալական* 10, 25, 29, 30, 51.
*Ապահովագրություն պետական* 8—46, 50, 54, 113—114.
*Առանձնապես հեռավոր վայրեր* 12, 17, 87—88.
*Արտոնություններ՝ ընդհանուր սկզբունքներ* 48, 53—55, 57—59.
*Արտոնության իրավունքի կորուստ* 55—57.

### Բ.

*Բանակ հին* 11.
*Բեռնատուրք* 69.
*Բնակարան* 48, 52, 54, 72—78, 83, 84, 97—99, 107—111.
*Բնակարանային վարձ* 50, 76—78.
*Բնակելի լրացուցիչ տարածություն* 78.

Գ.

Գյուղատնտեսական (արտադրություններ) 48, 54, 60—64։

Դ.

Դրոշմատուրք 68—69։

Թ.

Թոշակառուներ 42—44, 104, 105։
Թոշակառուներ մահացած 16, 23, 29, 30, 34։

Ի.

Ինքնահարկումն գյուղական 103—104։

Խ.

Խնամքի տակ յեղածներ 21, 22, 23։

Ծ.

Ծառայության տարիների հաշվառումն 10, 12, 13, 14, 15, 17։

Կ.

Կարմիր գվարդիա 10, 12, 65, 102։
Կարմիր պարտիզան 10, 12, 65, 102։
Կենսաթոշակ նշանակելու և տալու կարգը 41—42։
Կենսաթոշակ վերանորոգել 40—41։
Կենսաթոշակ կերակրողի մահվան դեպքում 8, 21—31, 34։
Կենսաթոշակ հաշմանդամության 8, 18—21, 30։
Կենսաթոշակ անհատական 8, 31—32։
Կենսաթոշակ ծառայության տարիների 8, 17—18, 31։
Կենսաթոշակ ի՞նչ ռոճիկներից հաշված 16։
Կրթության արտոնություններ 48, 78—81։

Կուլակային յեղույթներից տուժածներ 100, 102·
Կենսաթոշակից զրկվելը 36—40·

Հ·

Հարկեր (ընդհան· արտոնութ·) 48, 54, 64—72·
Հարկերի հետաձգումն 68·
Հարկեր անասուններից 72·
» գյուղատնտեսական 82, 101·
» քաղաք· կուլտ—բնակարանային 106·
» յեկամտային 67, 105·
Հաշմանդամություն 16, 100, 102, 104, 105·
Հողօգտագործումն 50, 60, 61, 62, 85·
Հավելյալ վարձատրություն (լրացուցիչ) 16, 27·
Հեռավոր վայրեր 13, 28, 54, 88, 90—96·

Ձ·

Ձիերի վերաբերյալ արտոնություններ 66, 72·

Ն·

Նպաստներ՝ կերակրողի մահվան դեպքում 9, 33, 35—36·
Նպաստներ՝ արձակման համար (выходное) 9, 32—33, 40·
Նպաստներ՝ յերեխայի ծնվելու դեպքում 9, 33, 35·
Նպաստներ՝ թաղման համար 9, 33—35·
Նպաստ նշանակելու և տալու կարգը 41—42·
Նպաստն ի՞նչ ռոճկից հաշվել 16·
Նպաստից զրկվելը 36—40·

Շ·

Շքանշան 14, 26, 64, 101, 104, 105·

Պ·

Պարենային մատակարարումն 52·
Պատվավոր զենք 14, 26, 64, 104, 105·
Պրոֆեսիոնալ հիվանդություն 19, 30·

Վ.

Վորդեգրվածներ 22.

Տ.

Տարիֆ տարահովագրական 4.
Տուրքեր (ընդհան. պարտավորություններ) 48, 54, 64—72.
Տուրքեր դատական 70.
» գյուղի կուլտ-տնտեսական 104.
» նոտարական 70.
» նոտարակային 69.
» ջրային 78.
» կուրորտային 72.
» պետական 106.
» շինությունների 70—71.
» փաստաթղթեր ցուցակագրելու 72.

Փ.

Փայավճարներ դիֆերենցիալ 86.
Փոխատվություններ տնտեսության համար 60, 61, 63.

Ռ.

Ռենտա 71.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Եջ

Բաղվածք ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կարգադրիչ նիստի արձանագրությունից՝ միլիցիայի և քրեական հետախուզության աշխատակիցների մահվան կամ հաշմանդամության դեպքերի ապահովագրության տարիֆի մասին . . . . . . . . . . . 3—5

Հրահանգ ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխվարչության՝ Միլիցիայի գլխապետական կազմի անձերի ու նրանց ընտանիքների պետական ապահովության կանոնների մասին . . . . . . 6—46

Շրջաբերական ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխվարչության՝ Միլիցիայի գլխապետական կազմի անձերի ու նրանց ընտանիքների արտոնությունների մասին . . . . . . . . . . . . 47—81

Ընդհանուր սկզբունքներ . . . . . 53

Արտոնություններ գյուղատնտեսության ասպարեզում . . . . . . . . 60

Արտոնություններ հարկերի և տուրքերի նկատմամբ . . . . . . . . 64

Արտոնություններ ուրիշ հարկերի և տուրքերի նկատմամբ . . . . . . 67

Բնակարանային արտոնություններ . 72

Արտոնություններ կրթության ասպարեզում . . . . . . . . . . . 78

Շրջաբերական ՀՍԽՀ Ֆինանսների Ժողկոմատի՝ ԲԳ Միլիցիայի աշխատակիցների վրա տարածվող գյուղհարկի և պետապի արտոնությունների մասին . . . . . . . . . . 82

Գրություն Երևանի Կոմունալ Տնտեսության Գըլխավոր վարչության՝ բնակարանային ֆոնդից 5 տոկոս հատկացնելու մասին . . . . . 83
Շրջաբերական ՀՍԽՀ Կոմունալ Տնտեսության Ժողկոմատի՝ ԲԳ Միլիցիայի աշխատակիցների վրա տարածվող բնակարանային արտոնությունների մասին . . . . . . . . . . . 84
Շրջաբերական ՀՍԽՀ Հողժողկոմատի՝ ԲԳ Միլիցիայի աշխատակիցների վրա տարածվող հողօգտագործման արտոնությունների մասին . 85
Շրջաբերական Հայկոոպի՝ ԲԳ Միլիցիայի աշխատակիցների դիֆերենցիալ վճարներին վերաբերյալ արտոնությունների մասին . . . 86
Հրահանգ ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավարչության՝ ԲԳ Միլիցիայի գլխապետական կազմի վրա տարածվող արտոնությունների մասին առանձնապես հեռավոր վայրերում ծառայելու վերաբերմամբ . . . . . . . . . 87—96
Հրաման ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի Գլխավարչության՝ ԲԳ Միլիցիայի աշխատավորների արտոնությունների մասին բնակարաններից վտարելու վերաբերմամբ . . . . . . . . . 97—99
ՀՍԽՀ ԲԳ Միլիցիայի աշխատավորների հարկային արտոնությունները . . . . . . 100—106
1. Ապահովագրական վճարումներ . 100
2. Գյուղատնտեսական հարկեր . . 101
3. Գյուղական բնակչության ինքնահարկում . . . . . . . . . . . . 103
4. Գյուղի կուլտուրական ու տնտեսական կարիքների համար միանվագ տուրք 104
5. Եկամտային հարկ . . . 105
6. Քաղաք. կուլտ-բնակարանային հարկ . 106
7. Պետական տուրք . . . . . 106
Շրջաբերական Միլգլխվարչության Միլիցիայի կազմին պատկանող անձերի ու նրանց ընտանիքների արտոնությունները վարչական կար-

դով բնակարաններից վտարվելու խնդրում . . 107
Գերագույն դատարանի շրջաբերականի (1932 թ. հունվարի 7-ի № 4) բովանդակությունը վարչական կարգով վտարման մասին զինվորական ու ծովային գերատեսչություններին պատկանող տներից . . . . . . . . 108—111
Գրություն բոլոր քաղ. և շրջմիլ. վարչությունների պետերին . . . . . . . . . . . 112
Վորոշում ԽՍՀՄ Ժողկոմխորհի ԲԳ Միլիցիայի շարքային կազմի պետական ապահովության մասին . . . . . . . . . . . . 113—114
Այբբենական ցանկ . . . . . . . . . . . 115

---

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0039918

(264)

A I/4437